

Universitäts- und Landesbibliothek Bonn

Anania širakac'i

Ter-Mkrtč'yan, Galowst

Vağaršapat, 1896

urn:nbn:de:hbz:5:1-12553

~~Goussen 3589~~

~~40~~

Goussen 41 3589

ԳԱՆՈՒՍ ՏԵՐ-ՄԿՐՏԵԱՆ

Համար 3589

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ



Արևազուրիւն 1896 թ.-ի «Արարատ» Փետրուար եւ Ապրիլ համարներից.



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ի

Տ. Տ. ՄԿՐՏԶԻ Ա.

Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի

Ամենայն Հայոց




Վ Ա Ղ Ա Ր Շ Ա Պ Ա Տ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1896

3589



80

UNIVERSITÄTSBIBLIOTHEK BOMM

UNIVERSITÄTSBIBLIOTHEK BOMM



Ա

1877 թուին Գ. Պատկանեանը հրատարակեց Շիրակացու մեզ հասած երկասիրութիւնները «Անանիայի Շիրակունեոյ Մնացորդ Բանից» վերնագրով (Ս. Պետերբուրգ), «Արարատի» յաւելուածներում մտադիր եմ տալ հետզհետէ Շիրակացու այն գրուածքները և պատասխանները, որոնք չեն մտել Պատկանեանի յիշեալ հրատարակութեան մէջ: Այս նոր հրատարակուելիքները մասամբ բոլորովին անծանօթ են և մեր հին գրականութեան պատմութեան մէջ չմտած, մասամբ յայտնի են այս կամ այն բանասիրին (մասնաւորապէս Հ. Ալիշանին), բայց այսու ամենայնիւ հայագէտների մեծամասնութեան անմատչելի մնացած՝ Ի մի ամփոփել այս հատուածները անհրաժեշտ է թէ լեզուաբանական, թէ պատմական և թէ այլ տեսակետներից: Քննադատութեան կմնայ սրանց վաւերականութիւնը հերքել կամ հաւաստել:

Եռալիկայ փոքրիկ երկասիրութիւնը վերագրում ենք մենք Շիրակացուն հիմնուելով մի հնազոյն ժողովածուի վրայ: Այդ ձեռագիրը «Գէորգ Կաթողիկոսի Յուցակի» համար 102-ն է, մի նշանաւոր և ամենաթանկագին հնութիւն: Թուղթ, երկաթագիր, հայոց ՆԼ (= 981) թուականի յիշատակարանով: Իւր առաջին մասով դեռ աւելի էլ կանգուի գրուած, այն է՝ Հայոց ՆԻ. թուականին (= 971 Փրկչական), բազմաթիւանդակ մի ձեռագիր: Այս 2-ի գլխաւոր յիշատակարանները արդէն հրատարակուած են Հ. Տաշեանի ձեռքով (Մանր Ուսումնասիրութիւնք, Հետազոտութիւնք և Բնագիրք, Վիեննա, 1895, եր. 202 և յաւելուած): 2-ի մանրամասն նկարագրութիւնը դուրս կգայ մեր մատենադարանի «Մայր Յուցակում»: Շատ անգամ էլ դեռ մենք առիթ կունենանք վերագանալ այս ձեռագրին՝ հրատարակելով նրա հրատարակուած մասերը: Ամբողջ ժողովածուն, սկզբից և վերջից թերատ, ունի ընդամենը՝ իւր այժմեան վիճակում՝ 383 յօդուած (ԾԱ—ՆԼԳ): 2-ի սկզբից պակասում է 50 յօդուած (Ծ): ԾԱ—ՀԳ յօդուածները ամբողջապէս թուում են լինել Շիրակացունը: Յամենայն դէպս եր. 5b ԾԳ-դ յօդուածի վերնագրում կարդում ենք Անանիայի անունը—«Անանիայի համարողի վասն ընթացից արեգական և այլն»: ԾԳ, ԾԵ յօդուածների խառնուրդը պակասում են լուսանցների պատառոտուն վիճակի պատճառաւ: 8-դ թերթի ամբողջ ստորին կէսը չկայ: 8b երեսի սկզբնաւորութիւնն է յօդուած ԾԶ շարքմունք և պատասխանիք յազգս արարչութեանն» վերնագրով, որ և մնում է թերատ, ինչպէս ասացինք թերթի ստորին կիսի բացակայութեամբ: 9-դ թերթից սկսուում է մեր հրատարակութիւնը, առանց վերնագրի և առանց յօդուածի թուահամարի (ԾԷ): Իժուար է ասել թէ արդեօք 2-ի նախնական վիճակում այժմեան 8 և 9-դ թերթերը միայն շարունակութիւն էին կազմում: Թերևս կար այդ երկու թերթերի մէջ մի ուրիշ թերթ էլ, որ այժմ պակասում է: 2-ի արդէն համարները՝ ստորին լուսանցքներում համեմատաբար նոր են և վերջին կազմողին են պատկանում: Այդ ժամանակ 2-ը արդէն այժմեան թերատ վիճակումն էր: Ահա կազմողի նօտրագիր յիշատակարանը. «ԶՅիմէն վարդապետն Ապարանցին յիշեցէք ի Քրիստոս, որ ետ կապել զգիրքս յիշատակ իւրն և ծնաւորացն իւրոց՝ հաւր Խաչատուրին և մաւր Նարնջին. թվ. ՌԼԳ. (2 եր. 37a, ստորին լուսանցք): Այս այն Սիմէոն Ապարանցին է, որի Վիպասանութիւնն ունինք (տպ. Էջմիածնի, 1870): Ե. յսպիսով մեր հրատարակութեան վերնագիրը հաստատապէս և՛ թերևս՝ սկզբնաւորութիւնը պակասում են, եր. 13) և յետոյ՝ մեր այս հրատարակածին անմիջապէս կից՝ հետևում են Անանիայի երկու ձառերը «Անանիայի Շիրակայնեոյ Համարողի» վերտառութեամբ: Այդ ձառերը արդէն հրատարակուած են Պատկանեանից, եր. 4 և 15: Այս ձառերին հետևում է (եր. 29a) դարձեալ մի փոքրիկ հատուած Անանիայից շնորհն Անանիայի» վերտառութեամբ: Սրանով վերջանում է ժողովածուի Շիրակացուն վերաբերեալ բաժինը:

Այս համառօտ նկարագրութիւնից երևում է, որ մեր հրատարակածը 2-ում Անանիայի գրուածքներից քաղուած հատուածների շարքումն է, սկզբից թերատ՝ բայց վերջից անմիջապէս կից Անանիայի ճառերին: Այս հանգամանքը կարող է մի հասանալիս ապացոյց համարուել, որ այս գրութիւնն էլ Շիրակացու գրչին է պատկանում:

Այդ բանին երկրորդ ապացոյց կարող են համարուել գրութեան նիւթը և լեզուն: Ըստ տեղ նոյն իմաստները գրեթէ միևնոյն բառերով կրկնուում են այս գրուածքի և Շիրակուունու ծանօթ երկասիրութեանց մէջ, Բայց վերջնական և աւելի գրական ապացոյց այս գրութեան Շիրակացունը լինելուն գտնում եմ ես նոյն հեղինակի գլխաւոր երկասիրութեան (Յաւութիւնի հր. Պատ. եր. 34) մէջ: Խօսելով լուսնի վրայ Շիրակացին իմիջի այլոց ասում է. «... ըստ աստուածային գրոց որ ասաց, թէ արար լուսաւորս մեծամեծս ի նշանս, « ի ժամանակս, յաւուրս և ի տարիս՝ յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ի լուսաւորացդ, եթէ որ ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ օտարոտի քննութեամբ: զի որ միտ եղեալ ընտրեսցէ զգեղեցիկ փորձ նոցա, և ոչ խառնիցէ ի ներքս ամագարչութիւն ազգի « ազգի հնարագիտութեան, գտանեն ի նշանաց անտի, զի վասն խոնաւոյ զժամանակն ցուցաւնէ, բազում անգամ վարդապետք լինին մեզ օդոյն պղտորութեան և դառնաշունչ սառնաւանեաց:

ՅԱՂԱԳՄ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՄԱՆԱՑ.

Զի յերեկօրեայ (= յերեքօրեայ) ժամանակի յորժամ վճիտ երևիցի, զյստակ « պարզոյ յայտ առնէ. և Յորժամ ի մահիկ « եղջիւրսն զնշան կարմրութեան կամ զմթութեան ունիցի՝ ջուրք բազումք յամպոց յերկիր հեղուն, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօդս բարբառի. և Յորժամ շուրջ բակ ունիցի յամպոց՝ ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին, կամ զարամուր բքոց և զգառնացուցիչ հողմոց ամբոխելոյ յայտ առնեն:

Յորժամ յեղջերսն լուսնի կարմրութիւն և մթութիւն երևի՝ ջուրք բազումք հեղուն յերկիր և հարաւ յորդաշունչ յաւոս բարբառի:

Յորժամ լուսինն բակ ունիցի յամպոց . . . ջուրք բազումք հեղուն յերկիր և կամ զամբոխումն աւոցոց դառնաշունչ նշանակէ (տող 226—230):

« Զի յընծայմանն լուսնի բազում անգամ յորժամ յստակ և խաղաղ իցէ օդն, յանկարծակի (խոռվութիւնք) սաստիկ օդոց յայտնին ի նմա մրկեալ, և ամպք ի վերայ ամպոց դիզանին յահ և յերկիւղ մեծի տագնապի: Եւ այսու ամենայնիւ յայտ է, եթէ նրաշանք որ լինին ի լուսաւորացդ՝ ի շահ օգտութեան են երկրի: Նաւաւարն զգուշասցի և այլն « (Հրատ. Պատ. եր. 51):

Խօսելո արեգական վրայ Շիրակացին ասում է.

ՅԱՂԱԳՄ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՄԱՆԱՑ.

« Զի Յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ և արեան և կայծական նշանակ ունիցին ճառագայթքն, ըստ փոփոխման խտաշունչ օդոյն եթէ ի նոյն կերպարանս կայցէ, և օդն պղտորեալ և յուզեալ ոչ յստակիցի. և գոյնն մթնագոյն՝ ոչ լըթասցի, և հողմք ևս խտագոյնք յուզեսցին, և ամպն ևս քան զևս յաւելցէ, զերկար խոնաւայուզից և զսաստիկ անձրեաց յայտ առնէ:

Յորժամ ընդ ծագել արեգական մթագոյն ելանիցէ և նման արեան ունիցի զճառագայթան՝ թե ի նմին յամիցէ և աւզն վիզեալ ոչ յիստակիցի, և ապա ևս քան զևս բազմանայցեն և աւգքն խտաշունչ յաւելցին՝ զսաստիկ անձրեաց յայտ առնէ (տող 213—216):

Եւ Յորժամ յամպոյ յամպ մտանիցէ արեգակն, զջերմակիծ շող ամպոյն յերկիր առաքելով՝ զխոնաւութենէ օդոց յայտ առնէ:

Յորժամ արեգակն ջերմ շողիւք . . . և մանաւանդ ամպ յամպ մտանէ ջերմ ճառագայթիւք՝ զամպոց նշանակէ (տող 218—220):

«Եւ յորժամ ելանիցէ ծագումնն դա-
«նաջինն խանձելով՝ զառօրեայ անձրեւածումն
«նշանակելով: *

« Եւ յորժամ ի մուտս զյետոյն խան-
«ձիցէ զերկինս կարմրացուցանելով՝ զառօրեայ
«պարզոյ յայտ առնէ:

« Մեկնութիւն նշանաց եղև առաջին բա-
«նիւքդ (Տրատ. Պատ. եր. 56):

Այս օրինակներէն պարզ երևում է որ նոյն իմաստները, գրեթէ միևնոյն խօսքերով, երբեմն նոյն իսկ բառացի կրկնուում են: Դեռ կարելի էր ուրիշ օրինակներ էլ աւելացնել: Բայց մեզ համար աւելի նշանաւոր են վերջին խօսքերը՝ «Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւքդ», այսինքն է թէ՛ նշանների մեկնութեան մի քանի օրինակներ բերելով Շիրակացին ընդհատում է իւր խօսքը, մասնացոյց անելով ընթերցողին մի ուրիշ գրուածքի վրայ, որ էր նշանաց Մեկնութիւն, անշուշտ աւելի ընդարձակ, ամբողջական: Այդ նշանաց Մեկնութիւնը նախընթաց էր Անանիայի «Յաղագս Երկնի» գրուածքին, ուստի և բաղդատութեամբ կարող էր կոչուիլ «առաջին բանք»: Ուրիշ խօսքով՝ Անանիան մի քանի օրինակ բերելով լուսնի, և մի քանի օրինակ արեգական նշանների, կարճ է կապուած՝ առաջարկելով ընթերցողին դիմել իւր մի ուրիշ գրուածքին, նշանաց Մեկնութեանը:

Մենք այս վերնագիրն էլ կտայինք ներքևի հրատարակութեանը, եթէ մեզ օգնութեան չհասնէր մի ուրիշ ձեռագիր: «Գէորգեան Յուցակի» թ. 95 նօտրագիր ձեռագիրը՝ Թղթոց գիրք և ժողովածու, գրուած հայոց ՊԼԵ—ՋԻԵ (1426—1476 փրկ.) թուին, ձեռամբ Մատթէոս գրչի, ունի մի հատուած, որ համարում է ներքևի հրատարակութեան: Այդ համառօտութեան վերնագիրն է «Յաղագս ամպոց և նշանաց», որն և բոլոր հաւանականութեամբ ընդհանրապէս վերնագիրն էր: Յամենայն դէպս այս վերտառութիւնը բոլորովին համապատասխանում է Շիրակացու երկասիրութեան բովանդակութեանը: Դնում ենք այդ համառօտութիւնը և խուսափելով երկարութիւնից, բաւականանում ենք նշանակելով իւրաքանչիւր ասութեան դիմաց ընդարձակի տողահամարները:

26ա. թ. 95, եր. 341b.

«ՅԱՂԱԳՍ ԱՄՊՈՑ ԵՒ ՆՇԱՆԱՅ»

Յորժամ ծագէ արեգակն ** և կայծակ լուսոյ, և առ նովաւ շիկագոյն ամպ լինի կամ մթագոյն՝ շիկագոյն՝ հողմոյ նշանակ է, իսկ մթնագոյնն՝ անձրեւոյ (=Ընդարձակի տող 65—66):

Յորժամ ընդ ելանել արեգականն ամպ լինի ահաւոր, և ապա արեգակն ամպովն ահաւոր երևի, և վերանայ ճառագայթիւքն և լոկ բոլոր ելանէ՝ անձրև նշանակէ (Ընդ. տ. 73—75):

Յորժամ արեգակն մեծ երևի ամպով՝ պարզ նշանակէ (տ. 76):

Յորժամ ձմերանի արեգակն գեղնագոյն երևի՝ պարզ նշանակէ (տ. 79):

Յորժամ ընդ արևմուտս արեգակն ամպով առագաստեալ երևի՝ անձրև նշանակէ (տ. 84):

Յորժամ արեգակն ճառագայթիցն (այսպէս) և առնովաւ շիկագոյն ամպ՝ ոչ է ակընկալութիւն անձրևի (տ. 88):

Յորժամ կամի արեգակն ծագել և առ նովաւ շիկագոյն և հրագոյն ամպ լինի՝ աւրն ոչ լինի առանց անձրևի և ոչ ամպ առանց ցօղոյ (տ. 95):

* Այլ ընթերցում, ուրիշ ձեռագրից. Դաւթեալ յորժամ լինիցի ծագումն գյառաջեան խանձելով՝ զառօրեայ անձրեւածումն նշանակէ:

** Թէ այստեղ եւ թէ յետոյ արեգակն բառը գրեթէ միշտ միեւնոյն զաղասիարագրով, ինչպէս որ Հոդարձակում:

- Յորժամ ընդ մտանել արեգականն ցաւղ հարկանի՝ անձրև նշանակէ (տ. 114)։
- Յորժամ կամար երևի ի վերոյ՝ անձրև նշանակէ (տ. 139)։
- Յորժամ մրջիւնն զձունն ի դուրս պեղէ՝ անձրև գայ (տ. 166)։
- Յորժամ մառախուղ ի վերայ լերանց անկանի՝ ամպոց և հողմոց նշանակ է (տ. 151)։
- Յորժամ շամանդաղ ձգի ի վերայ լերանց՝ պարզ նշանակէ (տ. 187)։
- Յորժամ աստեղք պողպաղ երևին և շարժին՝ ընդ երկար անձրև նշանակէ (տ.)
- Յորժամ ծիծռունք զթևս իւրեանց ճախրեն՝ անձրև նշանակէ հողմով (տ. 157)։
- Թէ զթևս իւրեանց ի ջուրս հասուցանեն՝ յուղմունք հողմոց և ամպոց լինին (տ. 157—158)։
- Յորժամ ակռաք կանչեն և զթևս ճախրեն՝ կարկուտ նշանակէ (տ. 170—172)։
- Յորժամ լուսինն . Գ. կամ . Գ. աւուրն սուրբ և վճիտ երևի՝ պարզ նշանակէ (տ. 4)։
- Ապա թէ մահչիկ եղջիւրն մթալար թխութիւն ունիցի՝ անձրև նշանակէ (տ. 4—11)։

Այս բոլորից պարզ է ուրեմն, թէ մենք որտեղից ենք առնում հրատարակութեանս ենթագրական վերնագիրը և ինչ հիմունքներով այս գրուածքը վերագրում ենք Շիրակացուն կամ ինչպէս մեր հնագոյն օրինակն անուանում է՝ Շիրակային Անանիա Համարողին, «Ային» վերջաւորութեամբ ազգանուններ թէև հազուադիւրս մեր հին մատենագրութեան մէջ, բայց կան, ինչպէս օրինակ Ընծային = Ընծայեցի, Հարբային = Հարբացի ևլն. (տես Ղազար Փարպ.)։

Մնում է մեզ մի երկու խօսք ասել Անանիայի այս երկասիրութեան արժանաւորութեանց և նշանակութեան մասին, Ամենից առաջ հետաքրքրական է գրուածքի լեզուն, իւր բազմաթիւ նոր բառերով, ասացուածներով և օտար բառերովը, Բովանդակութեան կողմից այս փոքրիկ գրութիւնը գլխովին տարբերուում է մեր սովորագիտական—աստղաբաշխական—աստղագիտական մատենագրութեան մէջ եղած բազմաթիւ նման գրուածքներից, Սա մի զուտ գիտական գրուածք է, բոլորովին ազատ աստղագիտական—ախտարական տարրից, Միմիայն բնական—բնագիտական բացատրութիւններ և մեկնութիւններ են տրուած նշաններին, եւ այս մի շատ բացառիկ երևոյթ է, գրեթէ իւր տեսակի մէջ միակը, մեր հին մատենագրութեան մէջ, մինչդեռ նման բովանդակութեամբ բանաբաղութիւնները հետագայ և յետին դարերում խճողուում են տգէտ և նախապաշարեալ դանդաղումներով, Մի քանի օրինակ այս վերջիններից. «Բմաստասիրաց ասացեալ յաղաքս լուսնի և արեգական. ի նաւասարգի թէ լուսինն խաւարի՝ շատ ձիւն գայ. ի հոռի եթէ լուսինն խաւարի՝ ելանէ թագաւոր մի յարևելից և առնէ արիւնհեղութիւն . . .» (2Եռ. 2026, 9)։ Ահա լուսինն ու արևելից թագաւորը իրար հետ շաղկապուած։ Ուրիշ օրինակ աստղաբաշխական—աստղագիտական «ցուցմունքներից»։ «Յորժամ յարևմտից կողմն ամպ մնա մինչև ի վաղիւն՝ նշանակ է անձրևի, Թէ ի մուտս արևուն ամպ խանձել տեսանես՝ անձրև նշանակէ։ Յորժամ լուսինն նոր լինի կամ փուլ և կարծիր դառնա կամ մլարի՝ բերոյ նշան է . . . Յորժամ աստղ ցոլանա յարևելից յարևմուտս՝ թագաւորն պարսից և խուաց (?) պատերազմին, որպէս ասէ Անգրէաս իմաստասէրն . . . Եթէ ի չորրորդ աւրն զբազմաստեղն գնակ տեսանես՝ զօրացն պարսից մեծ շարժումն լինի, ապա թէ ճապաղ՝ պարսից նուազութիւն և Հայոց բարձրութիւն» (2. Թ. 2024, 7)։ Եւ այսպէս անվերջ * Անանիայի սոյն գրուածքը, ինչպէս ասացինք, ազատ է բոլորովին աստղագիտական տարրերից։

Մնում է մի ուրիշ խնդիր. բնագիր է թէ թարգմանական այս «Յաղաքս ամպոց և նշանացը»։ Մենք հակուած ենք կարծել վերջինը, ոչ միայն օտար (յոյն) բառերի գործածութեան պատճառով—այդ կարող էր տեղի ունենալ և ինքնուրոյն հայ բնագրում—այլ աչքի սռաջ ունենալով գիտողութեանց մի քանիսի անհնարաւորութիւնը Հայաստանում կամ նոյն իսկ Տրապիզոնում, ուր երկար տարիներ ապրել է Շիրակացին (օրինակ կղզիների մասին եղած գիտողութիւնը տ. 195)։

* Այդպիսի «ցուցմունքներ, կան եւ հրատարակուած Էֆիմըտէնքի, Ծրագախանների մէջ, ս.ես օրինակ՝ Ծրագախան, տպ. Ծրեւան, 1877. եր. 267, 285։ Տես նաեւ Էֆիմըտէ, Վենետիկ, 1796։ Այս հրատարակութեան մէջ կան հետքեր եւ մեր Ընդարձակից, օր. տես նշանց անձրևաց, հողմոց, մրջկաց եւ պարզութեան՝ գլուխը, եր. 172։

Թէև մեր երկաթագիր 2-ը հնութեամբ երևելի բայց անշուշտ ազատ չէ թերու-
թիւններից և աղճատանքներից: Մի քանի կէտեր մնում են ինձ համար խնդրական, օրի-
նակ ա. 146—8) Կ-՛-՛-՛ և «և փիւկոս» թռչունների անունը, որ պէտք է լինին միևնոյն
բանը, ինչպէս որ պահանջում է ասութեան ընդհանուր իմաստը. թերևս պէտք է լինին
առաջինը՝ Կ-՛-՛-՛, երկրորդը՝ Կ-՛-՛-՛ ? (= և փիւկոս), Փիւկոս յունարէն, եթէ չեմ
սխալուում, նշանակում է իշամեղու: Այս և ուրիշ միջին կէտերի բացատրութիւնը մնում
է աւելի հմուտներին: Յուսալի է նոյնպէս, որ նոր ձեռագրեր երևան գալով լրացնեն թե-
րին և ուղղեն վրիպակները: Մեր մատենադարանի մօտ 100 2-երի մէջ որոնցում Անա-
նիա Շիրակացուց հատուածներ կան, ինձ չյաջողուեց գտնել այս գրուածքի մի ուրիշ
օրինակ:

Գալուստ Տ. Մկրտչեան.

[ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿԱՅԻՆՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ]

[ՅԱՂԱԿՍ ԱՄՊՈՅ ԵՒ ՆՇԱՆԱՅ]

[ԾԲ]

[9a] ՅՈՐԺՈՄ օր. աւրեայ երևի լուսինն եւ եղջերքն վերածգեալ՝ եւ յստակ
5 եւ սուրբ լինի՝ նշանակէ զաւղ պարզութեան. ապա թե սուրբ են եղջերքն
եւ շիկագոյն՝ հողմային նշանակեն. վասն խառնուածոյ սեաւ թանձր ամ-
պոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն երեւի:

Յորժամ օր. աւրեայ լինի լուսինն՝ արժան եւ պայծառագոյն լինել, ապա
թե որպէս զ օր. աւրէն տխուր են եղջերքն եւ թանձր եւ ոչ սուր ձգեալ,
10 այլ լիացեալ ծայրքն եւ բթացեալ՝ նշանակեն հողմ՝ արեւմտեայ կամ անձ-
րեւ. վասն զի թխացեալ աւղն այնպէս ցուցանէ զեղջերան լուսնի:

Յորժամ օր. աւրեայ է լուսինն եւ եղջերք ոչ ի ներքս խոնարհեալ եւ ոչ յող-
նեալ արտաքս, այլ կանգուն վերածգեալ՝ հողմոց նշանակ է, վա[ս]ն որոյ իս-
կզբանէ կանգնին եղջերքն վերածգեալ յաւդոցն. որպէս երևի թե յաւդոցն
15 ձգի ի վեր, ոչ թե թեւ հողմոյ նշան, այլ սեւաթոյրջ հողմոյ նշան, որ է
հիւսիսային եւ լիւբեացի. ապա թե ի չորրորդումն նորին նման երեւին եղ-
ջերքն՝ առաւել նշանակէ զաւղոց սաստիկութիւն, զի վասն ուժգնութեան
աւդոցն եւ ի օր. աւուրն կանգուն երեւին եղջերքն:

Յորժամ եղջերքն հարաւայինն խոնարհեալ՝ զհարաւ նշանակէ. եթե արեւ-
մրտեայ եղջերն խոնարհեալ՝ զարեւմտէ հողմ՝ նշանակէ, ապա թե յարեւ-
մուտս կողմն ճապկեալ են եղջերքն՝ նշանակեն զհարաւոյ հողմ: վասն զի
20 մղէ կանգուն եղջերն զլուսաւորութիւն ի հարաւոյ յարեւմուտս եւ յա-
րեւմտից ի հարաւ, եւ այսպէս երեւի եղջերն խոնարհեալ յողմ:

Յորժամ օր. աւրեայ է լուսինն եւ ամենայն բոլորն շիկա[9b]գոյն է՝
25 զյուզմունս ամպոց նշանակէ եւ զաւղոց. ապա թե շիկագոյնս աճեցեալ
եւ հրացեալ՝ եւս առաւել քան զառաջին[ն] լինի յուզումն ամպոց եւ աւղոց:

Յորժամ երկուցուն կողմանցն հասարակեալ լուսինն միապէս, եթե յա-
ճունս իցէ եթե ի մաշս, եւ եղջերքն հարթեալ եւ մէջ հասարակին լցեալ,
վասն զի սկսնու յեղջերացն եւ մաշի յեղջերացն, եւ սուրբ է գոյնն՝ զպարզ
50 նշանակէ, ապա թե շիկագոյն՝ հողմին նշանակէ զաւուրս ամսոյն այսու
նշանաւ. ապա թե ի միոյ կողմանէ թխագոյն՝ յանկագոյն մասն ունի ամիսն:

Յորժամ նշան երեւի ի լուսինն յ օր. աւրեին կամ ի օր. աւրեին մահկա-
ձեւ՝ եթե ի պարզոյ եթե յամպոյ յուզման՝ մինչև ցհասարակն լուսնոյն զնոյն
նշանակեն աւդոյն հիւթք. ապա թե ի հասարակէ լուսնոյն երեւի նոյն նը-
25 շան՝ մինչև ցգլուիս լուսնոյն նշան լինի. ապա թե դարձեալ նշան լուսնոյն
ամսոյ ի գլուխն երեւի՝ մինչև ցհասարակն լուսնոյն մաշոցն նոյն լինի. դար-

Ժան. Տող 4. 8 եւն լուսն, արեգակ բառերը մեծ մասամբ գաղափարագրով են գրուած:
Տ. 8 . արժան ե. = արժան է, այլ եւ . թե, եթե. հսագոյն ուղղագրութիւնը պահում ենք անփոփոխ:
նոյնպէս . եղջերք. եւ նման հին ձեւերը, ա. 20, 21, եւն: 27, հին ուղղագրութիւն է եւ . երկուցուն . զ. եւ
ու թէ վրիպակ:

ձեռք ի հասարակէն նոյն լինի նշան մինչև երիս աւուրս մահկաձեւ նոյն լինի:

40 Երբժամ ի լուսինն մլար լինի եւ յամենայն կողմանց զլուսինն թաղան-
թեալ իցէ՝ եթե առ սակաւ սակաւ անաւորանայ մլարն եւ հալի թխագոյն
երեւմամբ՝ զպարզ նշանակէ: եւ այսպէս ծանուցանէ զաւգոցն ժողով ա-
նաւոր եւ դիւրահալ: Ապա թե լուսինն ի միջէ կողմանէ մլարն պատառի
եւ ձգի՝ հողմային հիւթից նշանակ է, եւ անտի լինի ձգումն հողմոյն՝ ուս-
տի ձգումն մլարին եղեւ: ապա թե դարձեալ ի լուսինն մլար երեւի՝ նշա-
45 նակէ յուզմունս ամպոց: վասն զի կրկնումն [10a] այս մլարի ի թանձրու-
թենէ հիւթոց աւգոյն եղեւ: ապա թե երրորդ եւս երեւե[ս]ցի մլարն եւ
թուխ՝ եւս դժնդակագոյն ցուցանէ զյուզմունս աւգոց, եւ այս երրորդ նը-
շան է դժնդակ եւ առաւել պատճառ յուզման ձմերանուոյ:

ԺԹ

50 Երբժամ առ արեգակամբ երեւե[ս]ցի նշան ջրերեալ՝ յուզումն ամպոց
լինի եթե հողմոյ է թե անձրեւաց: քան զլուսինն այս զաւրաւորագոյնէ,
զի եւ ճառագայթք արեգական ուժաւորագոյն են քան զլուսնի: քանզի ոչ
կարեն ճառագայթք լուսնի հալել զաւգոցն ժողովեալ թանձրութիւն ամպոց:
եւ այս [հիւթք] աւգոց արեգական յայտնապէս ցուցանեն զնշանս քան զլուս-
նի, որք ճշմարտապէս հային ընդ արեգակն: յորմէ նշանաց մարթի ճա-
55 նայել որպէս լինի:

Երբժամ յարեւելից կողմանէ արեգակն երանգ երանգ երեւի որպէս
թե հրագոյն եւ շիկագոյն եւ թուխ եւ կամ այդ ինչ գոյն հաստութեամբ
զխոռվութիւն աւգոց նշանակէ եւ չէ ակնկալութիւն պարզոյ:

Երբժամ արեգակն յիստակ երեւի եւ նորին նման յիստակ եւ անամպ
60 գաւտին որ զարեգակամբն երեւի՝ նշանակէ զառաջիկայ աւրն պարզ լինել:

Երբժամ [ամ]ենայն կողմանց հարթ երեւին մուտք արեգական՝ հողմ
նշանակէ: ապա թե արեգակն խուղեալ երեւի եւ ճառագայթք պատառեալ
է որ յարեւմուտս եւ է որ ի հարաւ կոյս, եւ մէջն պայծառ եւսուրբ
երեւի՝ անձրեւս եւ հողմս նշանակէ:

65 Երբժամ ընդ ելանել արեգական կայծակ լինի եւ առ նովաւ շիկագոյն ե-
րեւի կամ թխագոյն՝ նշանակէ շիկագոյնն հողմ՝ եւ թխագոյնն անձրեւս:
ապա թե է ինչ արեգակն որ շիկագոյն երեւի եւ է ինչ որ թխագոյն
նշանակէ անձրեւս թխագոյնն եւ հողմս շիկագոյնն:

[10b] Երբժամ արեգակն մտանէ կամ ծագէ եւ ճառագայթքն յի-
70 րեարս խոնարհեալ մղեալ յաւգոցն եւ զմի կողմն ընդ ծագելն կամ ընդ
մտանելն հովանի ունի յամպոյ, եւ է զի ամենայն իսկ ըմբռնեալ յամպոյ
լինի ընդ ծագելն եւ ընդ մտանելն՝ զայն աւուրս

Երբժամ յառաջագոյն քան զարեգական ծագել ամպ չափաւոր եւ
անաւոր՝ եւ ապա արեգակն ընդ ամպոյն վերանա[ւ] տխուր ճառագայ-
75 թիւք: այնպէս զի լոկ բոլորն երեւե[ս]ցի՝ անձրեւ նշանակէ:

Երբժամ ընդ ծագել արեգակն մեծագոյն քան զսովորականն երե-
ւե[ս]ցի եւ ընդ ելանելն սփռի եւ լայնանա[ւ], որպէս զի հալի ինչ, եւ
առ սակաւ սակաւ ի վեր ելեալ փոքրագոյն երեւի՝ նշանակէ պարզ լինել:

Երբժամ ձմեռնային ժամանակի ի մուտան գեղնագոյն երեւի՝ պարզ
80 նշանակէ: եւ այս ի խտացեալ ամպոց եւ լուծեալ եւ յանաւոր աւգ փո-
փոխեալ: եւ ի ճառագայթից ջեռեալ խոնաւ երեւեցուցանէ: որպէս զգաւ-
տի ձգի եւ ճառագայթքն ընդ խոնաւն խառնին, եւ գեղնագոյն եւ կանայ
երեւի ընդ մտանել արեւու:

Երբժամ ամպ առագաստէ՝ թե թուխ են ամպքն եւ ընդ առագաստելն
85 ճառագայթքն յամպն խառնին յերկօցունց կողմանց՝ նշանակէ զառաջիկայ
աւրն անձրեւս լինել, զի վասն թանձրութեան ամպոցն թուխ երեւի:

46. • երեւցի • ձեռք անտի արժանի է ուշադրութեամբ. մտք կարծիքով այս մի անցողական ձեւ է երե-
ւեցի • նազոյն եւ • երեւցի • համեմատաբար նորագոյն ձեւերի մեջ: Երկաթագիտ գրութեանց մէջ
շատ յաճախ է պատահում այս մեջն ձեւը: 35. Զնոպարում • թիւք աւգոց • ուղղում ենք Ի. Բ. Ի. Են-
տեւելով քննարկ 34, 46 տողերին: 78 2. • երեւեալ • 81 2. • որպէս զի գաւտի •

Յորժամ արեգական պատա[ր]ումն լինի եւ առանց ամպոյ մտանէ՝ եթե լինիցի[ն] առ նովաւ շիկագոյն ամպք՝ ոչ զցայգն եւ ոչ զյառաջիկայ աւրն չէ ակնկալութիւն անձրեւի:

90 Յորժամ արեգական ճառագայթքն տխրեալ մեզ երեւի[ն] եւ թխութեան նմանեալ որպէս[118] երբեմն մեզ խաւարչտագոյն երեւի[ն], եւ այս լինի արեգական խաւարչտանալոյ:

Յորժամ թանձր ամպ լինի առ նովաւ՝ յուզման ամպոց նշանակ է:

95 Յորժամ կամի արեգակն ելանել եւ առ նովաւ ամպք հրագոյն շիկագոյն եւ խիտ՝ նշանակէ զամպս, եւ ոչ լինին ամպքն առանց անձրեւի եւ ոչ աւրն առանց ցաւոյ:

Յորժամ արեգակն ելանէ եւ ճառագայթքն գողցես թե յարեւելս կոյս ելանեն զբոլորական եւ խաւարչտագոյն լինի՝ ցուցանէ թէ յանաւար ամպոց առագաստեալ լինի, եւ այս նշանակէ անձրեւ կամ հողմ: ապա թե ճառագայթքն առաւել մրկեալ երեւին՝ է՝ առանց ամպոյ նշանակէ:

100 Յորժամ առ արեգակամբ թուխ կամ մթար լինի՝ զխոռովութիւն ձմերանոյ նշանակէ: ապա թէ մաւտագոյն լինի մլարն՝ տեղատարափք լինին վասն զի նշանակեն այս ամպք զթանձրութիւն աւղոց եւ դժուարահալութիւն: որպէս ասացի թե մաւտագոյն լիցի բակն բոլորեալ արեգականն

105 եւ դժուարահալ՝—յայտ է թե երիցս անգամ այսպէս ամպք շրջապատեն զարեգակամբն՝—մեծ ձմերանոյ նշանակք են:

Յորժամ երեւի որ կոչի պատիղովն ամպ թանձր՝ ըմբռնեալ ժողովեալ յարեգական ճառագայթից, որպէս թե նորա նման երեւի եւ ընդ նմագնայ՝ ակնկալութիւն է ձմերանոյ: յայտ է՝ զի եւ այսպիսի ինչ վասն առաւելութեան թանձրութեան ամպոց անհալ լինի, թե մաւտ առ արեգակամբն գնայ: եւ յորժամ ի հարաւոյ կողմանէ լինի այս պատիղովն՝ հարաւ ցուցանէ, եթե արեւմտից՝ արեւմտէ ցուցանէ:

110 Յորժամ մտանէ արեգակն երեկուն եւ ցաւղ արկանէ՝ առաւել անձրեւս նշանակէ զայն աւուրս քան զծագել արեգականն: եւ վասն այնր լինի այնպէս, զի ի ծագել արեգականն ի ջերմութեանէ ի ցրտութիւն փոխի: իսկ երեկուն վասն առաջիկայ գիշերոյն ցրտութեան ամպքն հաստատուն կան, վասն այնր զյուզմունս ամպոց նշանակէ:

կ

115 ՈՍՑԵՂՔ են որոց խառնակեալ ճանապարհք լինին գնացից, որ անուանեալ կոչի[ն] յարգգող, եւ այս ճանապարհ թե սպիտականայ՝ հողմ ցուցանէ յայնմ կողմանէ ուստի շարժեցան: ապա թե ի միւսմէ կողմանէ աստեղքն ոչ շարժեցան, այլ յայդմէ կողմանէ՝ խառնակ հողմ նշանակէ:

120 Տեղի է որ կոչի մսուր եւ այս ժողով իմն է, որ երեւի զամպ նման, եւ լինի առ պատենիք խեցգետոյն եւ ֆ: աստեղք առ նովաւ՝ մի ի հարաւոյ եւ մի յարեւմտից, որ կոչեն էշս, եւ յորժամ պարզոյ ի վեր հայիս՝ յանկարծ մսուրն չերեւի և նուազ աստեղքն՝ որ էշքն կոչին՝ երեւին—զյուզմունս ամպոց նշանակէ:

125 Յորժամ մսուրն թուխ երեւի եւ աստեղքն իրերաց նման՝ անձրեւս նշանակէ:

130 Յորժամ առ մսուրն ֆ: աստեղքն որ կոչին էշք, եւ որ ի հարաւոյն է նուաղագոյն երեւի, եւ որ արեւմտէն նորին նման սուրբ՝ հողմն նշանակէ արեւմտէ: ապա թե շրջի՝ արեւմտէն նուաղագոյն լինի եւ հարաւայինն նորին նման լինի սուրբ՝ հարաւ լինի:

կ

135 Յորժամ կայծակէ ի չորից կողմանց եւ ի նմին կողմանց ուստի կայծակէն հողմք լինին՝ զյուզմունս ամպոց նշանակէ: մանաւանդ որ ի ծովու նաւք են վտանգին:

140 Յորժամ սկիզբն գիշերոյ լինի եւ ամպ երեւի նման գզաթոյ՝ զխոռովութիւն աւղոց նշանակէ:

145 Յորժամ կամարն ընդ արեւմուտս կրկին երեւի՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ որ եւ իցէ աստեղս տեսանես մլար թուխ՝ զյուզմունս
140 ամպոց նշանակէ:

ԿԲ

Յորժամ ի գլուխս լերանց[128]դնդչիւնք լինին՝ հողմս նշանակեն:

Յորժամ արագիլ ի ծովէ կողմանէ փախչի զարհուրելով եւ սուր ձայն
առնելով զյուզմունս ամպոց նշանակէ: Եւ վասն այնր փախչի՝ զի յա-
145 ռաջագոյն ճանաչէ ի խռովութենէ ծովուն:

Յորժամ պարզոյ կռփիւք ի մայրեաց թռչին ընդդէմ իրերաց զար-
հուրելով նշանակեն զյուզմունս ամպոց եւ հողմոց. եւ փիւկոս այս հա-
ւիկ մի խիկի՝ որ ի փոքր ի շնչմանէ շարժի:

Յորժամ մոմունք եւ սագք ի ցամաք ելանեն եւ զթեւսն կտուեն՝
149 150 զյուզմունս հողմոց նշանակեն:

ԿԳ

Յորժամ ի գլուխս լերանց ամպ ընդ երկար երկայնի եւ նուազ եւ
երկայն երեւի՝ հողմ նշանակէ:

Յորժամ պապիւք ի ծովէ ելանեն բազում՝ զմիմեամբք՝ հողմ նշանա-
կէ. նման է որպէս որ յորոշտուեդ (Ք) ելանէ:

Յորժամ ծովային կամ գետային հաւք անդադար մտխրղծին՝ որպէս
155 թե հարթ ջրոյն լինիցին՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ ծիծառունք առ լճովք թռչին ստէպ ստէպ եւ զթեւսն ի
160 ջուրն հարկանեն՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

ԿԴ

Յորժամ գորտք առ միմեանս ժողովին եւ կոչեն՝ զյուզմունս ամպոց
նշանակեն. եւ են գորտք որ կոչին գիւռնիովնք ճշմարտեն առաւել զժա-
մանակս եւ այնպէս մանրիկք են՝ մինչ տրղկունք կտեն զնոսայ:

Յորժամ աղաղանչք ձայն առնեն ընդ առաւաւտս՝ ձմեռն նշանակէ:

Յորժամ առ ծովեզերք թեւովք զջուրսն հարկանեն զյուզմունս ամ-
պոց նշանակէ:

[ԿԵ]

Յորժամ արջառ յերկին գլխամբարձ է եւ հոտայ՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մրջմունք զձուս իւրեանց հանեն ի ծակուց՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մրջմունք ժողովեալք եւ յորմ նստիցին՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ ընտանի հաւք կտուին[128]եւ մեծաձայն կոչեն՝ անձրեւս
նշանակեն:

Յորժամ ձայք զմիմեամբք շրջապատին եւ ճչեն՝ անձրեւս նշանակեն.
170 մանաւանդ ագռաւք յորժամ թռչին եւ միմեանց ձայնս առնեն՝ անձրեւս
եւ շանթս եւ կարկուտս նշանակեն:

Յորժամ ձայք թանձր ձայնիւ ճչեն եւ թեւովք զաւգս հարկանեն՝
անձրեւս նշանակեն:

ԿԶ

Յորժամ ընտանի հաւք եւ աղակտուցք եւ ձկնքաղք կտեն եւ ի բոյնս
175 գալով շարժեն զթեւս իւրեանց՝ յուզմունք ամպոց լինի:

Յորժամ արագիլք ի ծովակոյս իջանեն ձայն[իւ]անձրեւս նշանակէ:

ԿԷ

Յորժամ ճանձր սրագոյնս խածանեն եւ զնոյն արիւն յորդորելով
ծծեն՝ զյուզմունս ամպոց նշանակէ:

Յորժամ խոնաւոյ գիշերի ի պատրուկէ ճրագաց կայծ ոստանի՝ ան-
180 ձրեւ նշանակէ. եւ զի առ պատրուկաւն հրեղէն բոլորածեւ առ՝ անձրեւս
ձմերանի նշանակէ: Եթե ի պատրուկէն լոյսն չեղանէ կանգունս այլ է զի
ի մի կողմանէ կամ յերկոսեան կողմանս յայսկոյս յայնկոյս պղպջաց պէս
կողմանի՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ մոմունք ամարանի ստէպ ստէպ թռչին ճախրելով՝ անձրեւս
185 նշանակեն:

Յորժամ շամանդազ ձգի ի լեռնոտանէ եւ ծայրք լերանցն երեւի[ն]
յիստակ՝ պարզոյ նշան է:

ԿԸ

Յորժամ ի կառկարայս կամ ի սուտունս կայծակունք ժողովին՝ անձ-
րեւս նշանակեն:

Յորժամ կայծ ունի[ն] յինքեանս պուտունք որպէս կորեակ շուրջ զին-
190

148. մոմունք = միտինս, Ծրզնկացի Ժ խորան, Լեհ. բառ. հայկ. բառ.

քեամ[բ]ք՝ անձրեւս նշանակէ:

Յորժամ անդունդք շրջանս առնուն եւ խորն պայծառ երեւի՝ հարաւ հողմ լինի:

195 Յորժամ երկրի կամ կղզոյ ծայրք դիմաւք ի ծովս կողմն են եւ քան զինքեան[ւ] վերագոյն ամպ ունին՝ խառնակ հողմ նշանակեն:

Յորժամ հարաւահողմ լինի, ուժգին եւ սաստիկ արկանեն զցաւդ, հիւսիսային հողմոյ նշանակ է լինել:

200 [13a] Յորժամ յանդունդս երեւի որպէս փոշի եւ աւդ փոշեցեալ խարտեշութեամբ, այնպէս անաւորացեալ՝ որպէս թե չերեւի իսկ, նշանակէ հարաւ լինել:

Յորժամ շամանդալ լինի զամառն՝ զարեւմոտէ հողմ նշանակէ:

Յորժամ ընդ երեկոյս կարմրութիւն լինի յերկին՝ զպարզ նշանակէ. եւ յորժամ ընդ առաւաւտս՝ անձրեւս նշանակէ:

205 Յորժամ արեգակն յելսն իւր մթագոյն երեւեցուցանէ զճառագայթսն իւր՝ մեծ ամպոց յուզմունս նշանակէ:

Յորժամ ամպ յամպ ընթանա[ւ] յարեգակն եւ ամպն թանձրանա[ւ]՝ զմեծ ամպոյ նշանակէ:

Յորժամ ի մտանել արեգակն ճառագայթս ձգտեցուցանէ վետ վետ՝ զամպոց յուզմունս նշանակէ:

210 Յորժամ յարեգակն գաւտիք երեւին՝ նշանակէ զամպոց զեթերին եւ զաւզոց շնչ[մունս]:

Յորժամ ընդ ծագել արեգակն մթագոյն ելանիցէ եւ նման արեան ունիցի զճառագայթսն՝ թե ի նմին յամիցէ եւ աւզն վիզեալ ոչ յիստակիցի՝ եւ ապա եւս քան զեւս բազմանայցեն եւ աւզքն խստաշունչ յաւելցին՝ զսաստիկ անձրեւոց յայտ առնէ:

215 Յորժամ արեգակամբ այդ արեգակունք երեւին՝ զհողմոյ նշանակէ:

Յորժամ արեգակն ջերմ շողիւք՝ եւ ի վերայ գլխոյն որպէս հուր լուցանէ, եւ մանաւանդ ամպ յամպ մտանէ ջերմ ճառագայթիւք՝ զամպոց նշանակէ:

220 Յորժամ ընդ մտանե[ւ] արեգակն ամպքն կարմրանան, զոր ոմանք խանձումն ամպոյ ասեն՝ նշանակէ զպարզոյ:

Յորժամ արեգակն ցաւդ շատ արկանէ՝ նշանակէ զերաշտութեան:

Յորժամ աղեղն յամպս երևի՝ զսաստիկ ամպոց նշանա[կէ] եւ փարատէ զխստութիւնն:

225 Յորժամ լուսինն բակ ունիցի յամպոց, եւ մնայդ զարեգակն ունիցի՝ յամպոց ջուրք բազումք հեղուն յերկիր, եւ կամ զամբոխումն աւզոց դառնաշունչ նշանակէ:

Յորժամ յեղջերսն լուսնի կարմրութիւն եւ մթութիւն երեւի՝ ջուրք բազումք հեղուն յերկիր եւ հարաւ բռնութեամբ յաւդս բարբառի:

230 [13b] Յորժամ ամենայն աստեղք խառնակ երեւին՝ զանձրեւս նշանակեն եւ զեթերին շնչումն եւ կարկուտս ի տեղիս տեղիս:



Ա Ն Ա Ն Ի Ա Շ Ի Ր Ա Կ Ա Ց Ի

Բ

Շիրակացու վերին աստիճանի հետաքրքրական երկասիրութիւններից մէկն է անշուշտ նրա Թուարանական Խնդիրների ժողովածուն, որ կրում է Յաղագս Հարցման և Լուծման վերնագիրը: Նշանաւոր ոչ միայն իրրև առաջին Թուարանական աշխատանքը մեր հին մատենագրութեան մէջ, այլ մանաւանդ իրրև պատմական, տեղագրական, սովորութեանց ու բարքերի վերաբերեալ տեղեկութիւններով լի և հոծ մի գրութիւն, որ տալիս է մեզ միանգամայն և նոր բաների ու տեղեկանքների բաւական մեծ քանակութիւն և ընդլայնում է մեր տեսութեան սահմանները՝ այդ անցած դարերի վերաբերութեամբ:

Բոլոր ջանքս է եղել բնագիրը ուղիղ վերծանել և ճշտել, Երկու տարի առաջ ինձ յաջողեց գտնել Շիրակացու այս երկասիրութեան մի օրինակը Գէորգ Պաթուղիկոսի Յուցակում—այս հրատարակութեան Բ օրինակը—որ սակայն սխալաշատ էր և կարօտ մեծ սրբագրութիւնների: Այրբենական Թուանշանների սովորական շփոթութիւններից (գ—դ, զ—ը, Մ—Տ—Ո, և ըն) առաջացած վրիպակների ուղղելը՝ հաւանական ենթագրութեանց վրայ հիմնուած՝ չէր բաւել անշուշտ, եթէ չունենայինք Լուծմանց մէջ և պատասխանի Թուերը, որոնք և իրրև հաստատուն կառուան ծառայեցին ինձ վերականգնելու համար տաների շփոթութիւնից առաջացած վրիպակների մեծագոյն մասը ամենայն յաջողութեամբ:

Հայր Մեսրոպը, որ ներկայ էր լինում շատ անգամ իմ մանրակրկիտ ջանքերին, ուղղուած այս Թուարանական Խնդիրների բնագիրը վերականգնելուն, ցոյց տուեց ինձ մի նոր, լաւագոյն օրինակ այս գրուածքի, որին ինքն հանդիպել էր ժողովածուները ցուցակագրելիս, որով և գործը մեծապէս դիւրացաւ: Այս նոր օրինակը—հրատարակութեանս Ա օրինակը— ոչ միայն գլխովին արդարացրեց իմ բոլոր սրբագրութիւնները, այլ և պարզեց մնացած մութ կէտերը, այնպէս որ այժմ այս Ա և Բ ձեռագրերի համեմատութեամբ ունինք՝ գրեթէ անսխալ և լրիւ՝ գրուածքի ամբողջութիւնը:

Հայկ. Բազմբքի կազմողները չեն ունեցել Շիրակացու այս գրուածքը, որից սակայն մի քանի բառ Ստ. Լեհացու բառարանից, միջնորդաբար, մտել են այդ մեծ հրատարակութեան մէջ, տես՝ օրինակ, Լոք բառը, ուր առաջ է բերուած իրրև վկայութիւն այս գրուածքի Ժ-դ հարցման առաջին տողը՝ «լոք մի կալան ի գետն Երասխա», ոչ անմիջապէս Անանիայից, այլ Լեհացու բառարանից:

Պատկանեանի հրատարակութեան մէջ, 1877-ին, այս գրուածքը չկայ, իսկ նրա յառաջարանից տեղեկանում ենք, որ իւր հրատարակութեան ամբողջ նիւթը ստացել է Աննետից՝ Հայր Ալիշանից: Ուրեմն և պէտք է ենթադրել, որ այդ թուին Աննետիւմ անձանթ էր այս գրութիւնը, Առաջին անգամ մեր բազմահմուտ և ալեգարգ ծերունին է, որ շատ անգամ ամբողջ հատուածներով վկայութիւններ է բերում այս գրուածքից իւր Շիրակում (1881) և յետոյ «Այրարատում», զանազան անուանակոչութիւններով (Համարողական Առեղծուածք Անանիայի, Շիրակ եր. Կ, ծնթ. 7, եր. 5, սիւն. 10, Թուարանական Հանելուկք, Շիր. եր. 2, Թուարանական Առեղծուածք, Այրար. եր. 138 և ըն), Սակայն 1886-ին Հ. Զարր. «Հին Գպր. Պատմութեան» մէջ դեռ ևս չէ յիշած այս գրութիւնը, որով և հայագէտների մեծամասնութեանը մնում է ցարդ բոլորովին անձանթ:

Մեր այս հրատարակութեան բնագիրը շարուած և սրբագրուած էր արգէն, երբ շնորհակալութեամբ ստացանք պ. Գր. Խալաթեանցի նոր մեծ աշխատութիւնը՝ «Армянскій эпосъ въ Исторіи Моисея Хоренскаго, Москва, 1896», որ առաջ են բերուած այս գրուածքից հատուածներ Վիեննայի Միթարեանների մատենադարանի մի ձեռագրից, որի մէջ Շիրակացու այս գրութիւնը ունի հետեւեալ վերնագիրը. «Անանիայի Շիրակունդ» յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման» (տես Խալաթ. երկասիրութեան մասն Ա, եր. 223, ծնթ. 1), Թէ այս վերնագրից, որ իմ հրատարակութեան միայն Ա. ձեռագրում է գտնուում և թէ պ. Խալաթեանի մէջ բերած 7-դ Հարցումից (եր. 223) ապա-

Հովութեամբ կարելի է մակարերել, որ Ա. ի եննացին երի ձեռագիրը իմ Ա խմբիցն է, ունենալով նոյն առաւելութիւնները և միևնոյն թերութիւնները (պ. Խալ-ը հատուածներ է մէջ բերում Անանիայի 7, 9 10, 21 Հարցումներից):

Իմ Ա-ը մի բոլորգիր, անթուական ձեռագիր է, մեր հիմնական մատենադարանի ծողովածուներից, № 596, 53 (Կարինեանի 582), փոքրագիր (10×14 սանտիմ): Թուղթ, կաշեկազմ: անվարժ և տգեղ գրչութիւն, ընդամենը 321 թերթ, Հիրակացուն վերաբերեալ մասը սկսւում է 178b երեսից և վերջանում է եր. 208b: Այս ձեռագրում Հիրակացուց առաջ գտնւում է հետևեալ վերտառութեամբ գրուածքը. «Յաղագս թ Երանութեանցն, զոր ոմանք է թուեն. Արդ ինն երանութիւնքն փրկչին, զոր քարոզեաց ի լերինն ութ են ըստ էութեանն, այլ է են ըստ աստիճանաց . . .», որից յետոյ սկսւում է Հիրակացին, ինչպէս ասացինք եր. 178 b. «Անանիայի Հիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի Աասն Որպիսութեան Կենաց Եւրոց, Ես Անանիայ Հիրակացի ի յանանիայ (sic) գեղջէ, որ բաւանդակեցի զգարութիւն մերոյ ազգիս Տայաստանեաց . . .» (տես Հրատ. Պատկ. 1.):

Եր. 185 a սկսւում է մեր ներքեւում հրատարակած Յաղագս Հարցման և Լուծմանը, այսպիսի վերտառութեամբ և յառաջարանով.

«ԱՆԱՆԻԱՅԻ ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱ(Ր)ՄԱՆ
ՀԱՄԱՐՈՂՈՒԹԵԱՆՆԵՐ ԵՒ ԿԵՐՊԻՑ
ՀԱՐՑՄԱՆ.»

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՊՈՐՓԻՒՐԻ
(ՎԵՆԵՍ. 1853)

«Օձմենայն[ն] ասաց իմաստուն[ն],
«Թէպէտ և սակաւ իրազմաց, եթէ Զինչ
«ընդունելութիւնն, զինչ Բացարար-նիւն,
«զինչ բազմապատիկ և Բարբառն յազա-
«գըն Բաժանմանց և ապացոցից՝ պարանա-
«ցոս Երայր սոցայցն արեսն-նիւն: Համա-
«տար Բեղ ընչ[185b] Երեսն-նիւն առնելով
«փոքրեցայց ի յետն ունիւն-ց՝ իբր ներաժո-
«նեան յեղանակի՝ դաս թերանեացն անցա-
«նելով Բանի, ի Խորագոմնիցն ի Բաց կալ
«ի ինքորոց և պարագոմնիցն զափառապէս
«հանրեղելով: Արդ աստէն ինչ վարդապէի
«Յաղագս Հարցման և Լուծման. Հարցումն
«Ա. Այսպէս լուա[Յ] . . . և ին» (տես ներ-
«քեւի հրատարակութիւնը):

«Եւրոյ հարկաւորի, Քրիստաւորիէ,
«և յ'առ'ս Ըրիստոտէլի ստորոգու-
«թեանցն վարդապետութիւն, գիտել՝
«զինչ սեռ և զինչ տարբերութիւն և
«ինչ տեսակ, զինչ յատուկ և զինչ
«պատահումն ի սահմանացն Բացարար-
«րեսն-նիւն և Բարբառն յազագո Բաժան-
«ման և ապացոցի պարանացոսի Երայր սո-
«ցայցն արեսն-նիւն, համատար Բեղ ընչ-
«տար-նիւն առնելով փոքրեցայց ի յետն
«առիւն-ց իբր ներաժոն-նիւն յեղանակի
«դաս թերանեացն անցանել Բանի, ի
«Խորագոմնիցն ի Բաց կալ ի ինքորոց և
«պարագոմնիցն զափառապէս հանրե-
«ղելով: Արդ աստէն ինչ վարդապէի յա-
«ղագս սեռի և տեսակի» (եր. 227):

Բ ձեռագիրը չունի այս ամբողջ հատուածը իւր վերնագրով, և սկսւում է ուղղա-
կի Հարցումներից, զնելով այսպիսի վերտառութիւն. «Անանիայի Վարդապետի
Հիրակունւոյ (Յաղագս) Հարցման և Լուծման»:

Վաւերական է թուում մեզ Բ-ի սկզբնաւորութիւնը, Ա կներև է, ինչպէս պարզ երևում
է մեր բաղադատութիւնից, որ Անանիան, կամ մի ուրիշը, Պորփիւրի ներածութեան
սկզբնաւորութիւնը կամեցել է յարմարացնել իրրև յառաջարան Հարցումներին, Թերևս
Հիրակացին ունէր և մի գլուխ իսկապէս «Յաղագս կատարման համարողութեան և կերպից
հարցման» վերնագրով, որի մէջ խօսում էր թուարանական չորս գործողութեան՝ Գումար-
ման, Հանման, Բազմապատկութեան և Բաժանման մասին (=Ընդունելութիւն, Բացարար-
ութիւն, Բազմապատկ և Բաժանմունք), որոնց միայն վերնագրերն են պահուել Ա-ի այս հա-

տուածուճ, Պորփիրի բանաքաղը «զամն ասաց իմաստունն», ասելով, մեր կարծիքով հասկանում է Անանիային, Անտեղի կլինէր, մեր կարծիքով, ենթադրելը, թէ Հիրակացին ինքն է Պորփիրի բանաքաղը և « իմաստունն » ասելով հասկանում է իւր վարժապետ Տիւքիկոսին, որինը կլինին այդ գէպքում և Հարցումները, Մինչդեռ անկարօտ է ապացուցութեան, որ Հարցումների մէջ խօսողը ոչ թէ Տիւքիկոսը, այլ ինքը Հիրակացին է («Լուայ ի հօրէն իմմէ, ի Հիրակ առ մեզ եկն, այսպէս լուայ ի վարդապետէն», այսինքն է՝ Տիւքիկոսից, ևլն ևլն):

Հատ կանուխ, արդէն Ժ-դ դարում առ նուազն, Հիրակացու գրուածքները մտել էին ժողովածուների մէջ, ենթարկուելով ժողովածուների նիւթի ընդհանուր վիճակին, այն է՝ համառօտման, կրճատման, անջատման, յաւելուածների և խառնափնդորութեան, Արդէն Մագիստրոսին յայտնի է Հիրակացու գրուածքների այդ վիճակը. «զգիրս Անանիայ Հիրակունւոյ, որ բազում աշխատութեամբ և յածաչու խոնջմամբ հաւաքեալ ի զանազան և յոքնաբեղուն մատենից. յորում և ենթակայացեալ են ոչ միայն քառիցն արհեստք *, այլ բոլոր էակացն խոկմունս . . . զոր նախ քան զքեզ (=Պետրոս Կաթողիկոս Գետադարձ) . . . ընդ գրուանաւ ծածկէին» (Նամակ առ Պետր. կաթ. Այս հատուածը կայ և հրատարակուած Հ. Յար. Աւգեր. «Բացատրութիւն 2ափ. և Կշ. Նախնեաց, Վենետ. 1821, յառաջար.)):

Մագիստրոսից և Գետադարձից կանուխ է մեր № 102 երկաթագիր ժողովածուն, որի Հիրակացուն վերաբերեալ մասը դժբաղդարար թերի է, ինչպէս տեսանք անցեալ անգամ («Լրարատ» փետր.), Այդ հնագոյն ձեռագրումն էլ Հիրակացուց հատուածներ կան միայն մեծ և փոքր, և ոչ թէ հեղինակի մատենագրութիւնքն են անընդհատ և միայար, իրենց նախնական վիճակում:

Վերադառնալք Ա ձեռագրին.

Եր. 195a, անմիջապէս Հարցումներին կից հետևում են Անանիայի «Խրախճանահանները», եր. 198b, «Յաղագս Կշուոց և Կշուրդաց-ը» (հրատ. Պատկ.), եր. 202a «յաղագս չափոյ և չափուց և պատարաց» (հրատ. Պատկ.), եր. 205a «Թիւք որչափութեանց տանց հին կտակարանաց», եր. 206a «Թիւք որչափութեանց նոր կտակարանացն» (միայն վերնագիրը, չգրուած երես 206b), եր. 207a, առանց վերնագրի «Զմրուխտն կանաչ է» ևլն, եր. 208a, վերջին տողում: «վճարումն Անանիայի (208b) Հիրակունւոյ ժողովածոյն, և քի նյ մերոյ փառք ամէն»:

Ա ձեռագրում Անանիայի հատուածներին հետևում է եր. 208b «Քերականութիւնս կոչի եւթնգրեանք, զուգեալ ի Դա(ւ)թա Փիլիսոփայէ և ի հոռմա վարդապետէ կոչեցեալ անուն Փիւնիկ ևլն»:

Ի ձեռագիրը Գէորգ Կաթողիկոսի Ցուց. № 267-ն է. թուղթ, 15x21, խառն գրչութիւն, մեծ մասամբ նօտր, Բովանդակութիւնն է՝ Պօղոս վարդապետի պատմութիւն ժողովոց Հայոց, հատուածք Յովհան Մանդակունուց, Հապուհ Բագրատունուց (հրատարակուած, թէև շատ անինամ կերպով, Սամուէլ Անեցու վերջում, եր. 247—250), Էջմիածին, 1893), Թուղթք Պետրոս պատրիարքի Աղեքսանդրացուց և Ակակայ **, Թուղթ Անաստաս թագաւորի ընդգէմ ամենայն հերձուածողաց, կանոն մկրտութեան, զմաղղմայ և զսկիհօրհնելոյ, Պօղոս վարդապետի ընդէմ հերձուածոյն Բաղկեղոնի, թուղթ հոռմոց ի Հայս «Չայնակից և համաձայն ժողովոյն Բաղկեղ.»), Թուղթ Արիստոտելի յաղագս առաքինութեանց, եր. 71a յիշատ. «զ ս ա կ ա լ գ ծ ո ղ ս յ ի շ ե ց է ք ի մ ա ք բ ա փ ա յ լ ա զ օ թ ս

* Այս «քառիցն արհեստքը Խորենացու առեղծուածաւոր այբ առ քէն է, որի քացատրութիւնը տես ձայլականք ԺԲ. — Եւ նախադասեալ է Թուականութեանն եւ Երաժշտականութեանն, որք էն ի տարրորջ քանակէ տարակացեալք, իսկ Երկրաչափութեանն եւ Աստեղաբաշխութեանն՝ որք են ի շարունակ քանակէ. Մագիստրոս, սոյն նամակում):

** Առաջին Թուղթն ամբողջ, մինչդեռ Զարբ, օրինակում «Թերի ի սկզբան», տես Թրգ. եր. 289:

ձեռք և զիս զանարժանս զտէր Աստուածատուր աշակերտս՝ առոտս
 տէր յովանէս կաթողիկոսի դեգերեալ կամք և գծեալ գրոյս
 անմեղադիր լերուք»։ Երեք երես դատարկ, Եր. 73a, ուրիշ գրչութեամբ (նոտր)
 «Անանիայի վարդապետի Շիրակունդ Տարցման և լուծման» (ներքևի հրատ-ը), Եր. 76a
 «Խրատք առակաւոր բանից» և չն. — Ասի ի բժշկական վարդապետաց . . . (լէ պատմութիւն),
 Եր. 86b, Գիրք ի վերայ բնութեան հանրական և մասնական, քահանայի ուժեմն Իվաւշի
 (sic) անուն յետու (հմտ. Չարք. թրգ. Եր. 488), Եր. 93b Համառ. Պատմ. սք հայրապ.
 հայոց Գրիգորիսի վկայասիրի և ներսէսի Երգեցողի, Եր. 94a Խրատք և ցուցակ վասն
 գաւազան տալոյ և չն. Եր. 94b յիշատ. Այժմ ի Ռուսիան-Ռեանս հայոց . Ռ.Լ.Ը. որ բրեցի զայս
 սոցոսաթն ի կարխաւ Կալուսիս ի քաղաքս արքայապետաձեռն և առ որս տեառն ինչ Կալ
 ջանի բաժնակալի վարդապետին ինչ տէր Պետրոսին, որ այժմ ի բեր զարեգմանն ծափել (յ) Կալուսիս
 տիեզերաց. մանաւանդ յայտ աշխարհի։ Արք. անմեղադիր լերու անարժան յովանի մանուկն, որ ան
 ուսման ինչեղեալ եմ աշակերտ և գործովս ոչ. մի՛ ղեզարէր ոչնչ շարժոյս Երգոյր, զի ինչոյ յետ եր և
 սուտից ցորոյս ոչաւիտ ճառնի խոսիցի ի բրեցա։ Այս յիշատակարանին հետևում է համա-
 ռոտ ժամանակագրութիւն, հայոց . Ն.ԿԷ. Թուականից մինչև Ռ.Ծ.Ա. նոյն գրչութեամբ։ Այս-
 տեղ վերջանում է Յովսէփ մոնոզոնի գրչութիւնը Եր. 95b, Աւրեմն Բ ձեռագրի Շիրակա-
 ցուն վերաբերեալ մասը գրուած է Ռ.Լ.Ը. = 1589 Փրկ. Թուին, կարկառ քաղաքում Եովսէփ
 գրչի ձեռքով։ Եր. 96a—278a զանազան գրչութեամբ և այլ և այլ բովանդակութեամբ
 կան ուրիշ շատ հատուածներ, ի թիւս որոց նաև Արքանայ (Արևելցու) պատմութիւնը
 (Եր. 118a—201b), որի վերջում հետևեալ յիշատակարանը. «Բարտ. . . որ եր կառուցիւն
 (Կալուսի)՝* Եան ինչ հասանել ի վերջը զարտաքիտ ուսումն» Արք. բրեցա— ու ի ընդէր օրինակ յի-
 (ուսմ) ինչ՝ անարժան և մեղադր բրեցի և ինչուսմ Տեր սոցոսաթոսուր Կալուսի
 ու որս տեառն Տեր Յովսէփն և Կալուսիս . . . Արք. բրեցա— ու ի թիւն . Ռ.Ծ.Է. . . »

Այսպիսով ուրեմն մտաւորապէս գաղափար տուած եղանք մեր երկու տարրեր խրմ-
 բերի Ա և Բ ձեռագրերի մասին, Պ. Խալաթեանի ձեռքում եղած Ախիննայի ձ—ը, ինչ-
 պէս տեսանք, պատկանում է մեր Ա խմբին, նոյնպէս և Հ. Ալիշանի գործածածը, որչափ
 այդ կարելի է մակարերել Շիրակում և Այրարատում առաջ բերուած (մեծաւ մասամբ
 կողուած ընթերցուածներով) հատուածներից, Ա ձեռագիրը թէև անթուական, բայց
 անշուշտ կանուխ է գրուած քան Բ-ը, ինչպէս այդ երևում է գրութեան ձևից և ուղ-
 զագրութեան հնաձևութիւնից (եթե, լուս և չն), Այս երկու խմբերը միմեանցից բաժա-
 նուել են ամենայն հաւանականութեամբ երկաթ ագիր ձեռագրից, այլապէս դժուար
 կլինի մեկնել մի քանի վրիպակներ, ինչպէս օրինակ երկու ձեռագրին էլ ընդհանուր . Վ.Ո.
 ընթերցուածը (Գ-դ լուծման մէջ) փոխանակ . Վ.Մ. -ի (Ո=Մ), որ ենթագրում է երկա-
 թագիր նախագաղափար երկու խմբերի համար էլ, եթէ Ա-ը ընդհանրապէս աւելի լաւ է
 պահուած և համեմատաբար քիչ աղճատուած, զրա փոխարէն Բ-ն ունի տեղ տեղ այնպի-
 սի ընթերցումներ, որ անպայման կարևոր են բնագիրը վերականգնելու համար, Աերջա-
 պէս Բ-ը ազատ է Պորփիրի ներածութիւնից մտած ընդմիջարկութիւնից, որ, ինչպէս հա-
 վանական է ենթագրել, կատարուել է խմբերի բաժանուելուց յետոյ։

Անցնինք այժմ Հարցումներին.

Ա և Բ Հարցումների մէջ յիշուած է կամսարական Զօրակը և հայերի ապաստան-
 րութիւնը։ Այդ ապաստանութիւնը Հ. Ալիշան գնում է 571 թուին, և Զօրակի փոխա-
 նակ ունի «Զօրակ» ընթերցուածը (Շիրակ, Եր. 5), Զօրակ անունը հաւանականաբար
 նոյնն է, ինչ որ Խորենացու Զօրան (Զօրայ Գնթուանի, Զօրայ Ռշտունի), միայն թէ Զօ-
 րայ՝ աւելի հին ձև է, Փախչող պարսիկները ապաւինում են նախճաւան, որից հետևում

* 2-ի վերջն մասի թերթերը վերի կողմից մասամբ այրուած են. կրում են նաև ջրի հետքեր,
 երեսի ջրգծի են ենթարկուել։

է որ ընդհարումների տեղը նախճաւանից արեւմուտք էր գտնուում, Այրարատում էրևի Գուրի մտերբը: «Հետամտիկ» գեղեցիկ բառը առաջին անգամն է պատահում այստեղ (Ը Լարց): Հայկ. Բառարանը ունի այդ բառը, դիմացը նշանակելով Հիւ. այն է՝ Հիրակացի, առանց վկայութեան, երևի առնելով Լեհացու Բառարանից, Զօրակի ապստամբութիւնը Հիրակացին պատմում է՝ իբրև Լ ս ա ծ ի ւ ր Զօրից, Յովհաննէս Հիրակացուց (Ես Անանիա որդի Յովհաննիսի Հիրակայնու)» հրատ. Պատկ. եր. 26, մեր՝ տասներորդ դարի երկաթագիր ձեռագիր, № 102 Գ. Կթ Յուց. եր 29a): Ա.ն ունի «ի յաւրէն» ընթերցուածը, (Բ՝ «ի Զօրէն»), որ կարող է լինել և թերատ ընթերցուած, փոխանակ «ի յաւր(այ)էն»: Այս դեպքում Յովհաննէսը կլինի Հիրակացու ոչ թէ հայրը, այլ Զօրուն (=յօրայ):

Բ Լարցումը նոյնպէս առնուած է հայ ժամանակակից կեանքից, Գանձակ (Թաւրիզից ոչ հեռու)* և Գուրի քաղաքների անունները աղճատուել են տգէտ գրիչներից, դառնալով «գանձանակ» և «գուրի», ինչպէս որ Ի Լարցում Բալխը դարձել է «թողին», սակայն բարբարոզաբար մեր երկու խմբերը իրար ուղղում են: Այս և հետագայ հարցումներում ամենայն, հասարակ, երևոր, չորևոր բառերը թուարանական տերմիններ են, որ մեր արդի լեզուով նշանակում են՝ ամբողջ, կէս, մի երրորդ, մի չորրորդ կամ մի քառորդ. «Մարգարիտ շահուար» (Բ՝ «շահաւոր») ընթերցուածը թողնում ենք բնագրում, կարծելով որ այդ կարող է լինել մարգարտի մի որոշ տեսակը:

Գ և Դ Լարցումները բիւզանդական կեանքիցն են, Հիրակացին ասում է. «այսպէս լուայ ի վարդապետէն», այն է՝ Տիւքիկոսից, Տրապիզոնում: «Ա.Ո.» (=3600) դարձել է «գ.ո. և թ.» անշուշտ նախապէս գրուելով «գ.ո. և .ո.» (գ=դ): «Ա.Ո.» ընթերցուածի մի ուրիշ կերպարանափոխութիւնը տեսանք Գ լուծման մէջ, Իբրև թուանշան գործածուող տառերի՝ զանազան գրչութեամբ, այլևայլ ձևերով (վ=գո) գրուելուց առաջացած տեսակ տեսակ սխալները բաղմամբ են ձեռագրերում և երբեմն լուրջ ուղղորութեան արժանի: Գ հարցման լուծումից հետևում է, որ մի կենդինարը հաւասար է 7200 դրամի, սակայն մենք այդ գիտենք Հիրակացու և ուրիշ գրուածքից (Յաղ. Կշո. և 2ափ. և է կենդինարն .ԻՄ՝ դահեկան):

Ե-զ հարցումը զինուորական կեանքիցն է. «Պատուաւոր, աւագ, հեծեալ» տերմիններ են, նշանակելով որոշ աստիճաններ, Եղիշէն, որ շատ անգամ իբրև որոշ զինուորական աստիճան գործ է դնում «պատուաւոր» տիտղոսը **, Փիլոնի հայ թարգման ու թիւնից փոխ առած մի ասացուածում նախարար բառը փոխում է պատուաւոր, այսպէս:

Փիլոն ***

«Որք միանգամ զմեծ թագաւորն ոչ տեսին, նախարարին և որ ընդ նովաւն՝ ղնեն զառաջնոյ թագաւորին զարժանաւորութիւնն» (Լինելութ. III, Լարց. լգ. եր. 204)

Եղիշէ

«Որոյ ոչ է տեսեալ զմեծ թագաւորն, պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն» (Յեղան. Ը)

Երևի միայն պատուաւորները ունէին այն պատուանշանը, որ Եղիշէի մօտ կոչուում է «պատիւ վարսին» կամ պատիւարքունի (Ասասկի նկարագ.), ուստի և պատուանշանիցն է ծագում տիտղոսի կոչումը:

Զ հարցման մէջ հոռոմը գուրս է բերուած զբօսասէր և որկորեայ մի բարբազրական մանրամասնութիւն, որով որոշուում է յայտնի չափով եօթներորդ դարի

* Գանձակ Երաստանը եւ Թաւրիզը, թէեւ երկուսն էլ Ատրպատականում, բայց միեւնոյնը չեն: Տես զրանց յիշատակութիւնը Փաւստոսում, նաեւ Պատկ. «Խորեն» Աշխ. ողու. թրգ. ծնթ. 493:
** «Ինչ այդ ի նոցանէ՝ ի մեծ պատուաւորացն էր» . ի ծեռն պատուաւոր զօրագլխի. եւնու: «Պատիւը» այդպիսի որոշ նշանակութեամբ գործածուած տես եւ Ղազ. Փարս. Վենետ. 1892, եր. 271, 272:
*** Այս եւ նման յաճող դիտողութիւններ, որոցից նտեսում է, որ Փիլոնի հայ թարգմանութիւնը կասուել է ժամանակով եւ շորինացուց եւ Յովհաննիսիս իմաստասէրից եւ Երակացուց եւ Մամբրէի ժողովիցն ու Եղիշէից տես Փիլոնի հրատ. Վենետ. 1822, լատին յառաջարան. Մ. Ազգերանի, որից եւ լայն կերպով օգտուում են յետոյ ուրիշները, շատ անգամ առանց յիշելու աղբիւրը:

Հայերի վերաբերութիւնը դէպի հռոմները, Ա-ը լրացնում է Բ-ի «գ.թ.» թերատ ընթերցուածը, վերականգնելով ուղիղը՝ .ժե.=15, այսինքն է ամբողջի մի տասն և հինգ-երորդականը:

Է և Թ հարցումները նկարագրում են ձկնորսութիւնը Մարմետում, Կամսարականների ստանում: Մեր ժողովրդեան այնչափ սիրելի լոբը*, ինչպէս և այսօր, բռնուում էր Նրասխում իսկ աւելի մանր ձկներ՝ Ախուրեանում, ուղկանով կամ թարփով, Հայկ. Բռ. շմտած թարփը կենդանի բառ է, մինչև օրս էլ գործածական, Զրնկէցների տակ, մեծ մասամբ ջրաղացների մօտ, շինուում է տախտակաժամ կամ յատակ ծակոտկէն տախտակներով, կամ ծառի ճիւղերից հիւսած. յատակի շորս կողմը փակուած է լինում, Բաց է մնում միայն վերևը, որտեղից և թափուում է ջուրը, Ահա այս շինուածքն է թարփը, որի միջից ջուրը սուզուում է, իսկ ջրի հետ եկած ձկները մնում են յատակի երեսին: Առուններով հնարաւոր է լինում երբեմն ամբողջ գետակներ կապել թարփի վրայ, Այս մի արմատական միջոց է ձկնորսութեան, որով բռնուում է թարփից անցնող ջրում եղած բոլոր ձուկը: Է հարցման մէջ Բ-ն յաջողութեամբ վերականգնում է բնագիրը, լրացնելով Ա-ի թերին, տալով պակասող մի քառորդը կամ չորսերկուորդը (տես ընթերց. 8), Երկու ձեռագրումս էլ «ի Մարմետի» է, մինչդեռ Ալիշան և Խալաթեան կարգում են «ի Մարմետ», Ես պահում եմ բնագրում իմ ձեռագրերի միաբան ընթերցուածը, որից երևում է որ ուղղականն է «Մարմետի», մի ձև որ հնագոյն է քան «Մարմետը»: Տասներեքերորդ գարում չորս անգամ յիշուում է Մարմետ արձանագրութեանց մէջ, երկու անգամ «Մարմետ» ձևով (Շիր. 117, 129), մի անգամ «Մարմետի» («երկու այգի ի Մարմետի» Շիր. եր. 150), մի անգամ անորոշ («այգին որ ի Մարմետ է վերայ Երասխա» եր. 120, որ արձանագրութեանց շատ սովորական համառօտագրութեամբ կարելի է կարգաւ նաև որ ի Մարմետի վերայ Երասխա»), Այսպէս և Ախուրեանի հնագոյն ձևն ունինք Սարիղամիշի սեպագրի մէջ Ա—խ ու—ր ի—ա—ն ի, իրրև անուն քաղաքի, որ գտնուում էր նոյն անունը կրող գետի սկզբում**, Պարապելով նախահայկական սեպագրերով, որոնց մէջ տիրում են է վերջաւորութեամբ բառեր (թէ յատուկ և թէ հասարակ անուններում) և փորձելով դրանց հետքը որոնել հայերէնում, ուշագրութիւնս գրաւեցին այն կարծուածից շատ աւելի բազմաթիւ բառերը, որոնց հին հայերէնում ունեցած է վերջաւորութիւնը յապաւուել է նորումս (հիւսիսի այծի, արծուի, տեղի ևլն ևլն), Այս կէտի վրայ այժմս աւելի ևս արժէ ուշագրութիւն դարձնել, երբ յայտնի հայագէտ Ն. Մառը, որ նաև հըմուտ է վրացերէնին, թէև անցողակի՝ անսպասելի և նշանակալից կարծիք յայտնեց հայերենի և վրացերէնի ազգակցութեան մասին***, Թերևս հին հայերէնում է՛ն ուղղականացուցիչ էր այնպէս, ինչպէս վրացերէնում, Յամենայն դէպս շատ հետաքրքրական են լինելու յարգելի ուսուցչապետի յայտնելիքները:

Թ և Ի հարցումները առնուած են Կամսարականների որսերից, Գէն որստեղին առաջին անգամն է յիշուում այստեղ, Խորենացին գիտէ Գինայ գետ, որ անպատճառ չէ ենթադրում, թէ նա առել է իւր տեղեկութիւնը Շիրակացուց (Այր. 64, Խոր. Բ, կա.), Ի հարցման մէջ որսի մի առանձին տեսակն է նկարագրուում, որ կոչուում էր «բուն կանգնել», Կրատեղին շրջապատուում էր բազմաթիւ մարդկանցով և շներով, որոնք խրտնեցնում էին որսը դէպի բունը կամ դարանատեղին. որսի այս ձևը կա-

* Համբաւաւոր է եւ Կուրծ լոբը (—լոբ) Թիֆլիզում:

** Սարիղամիշի սեպ. ա. տող, հրատ. Նիկոլսկու №XXI, Археолог. Изв и Зам. 1893 г. № 12. Թէ Ախուրեան գետը, ու թէ Ալեքսանդրապոլի մօտով հոսող Արփան է, այլ Արգինայի ջուրը, որի մեծ վտակը սկիզբն է առնում Սարիղամիշի մօտերից տես Եր. եր. 2: Նախահայկական բնեւորազրծի բուրրովին անտես առնել հայագէտների կողմից, իմ կարծիքով սխալմունք է: Որչափ եւ խնդրական լինի այդ սեպագրերի լեզուն, գոնէ յատուկ անունները տալիս են քաղաքաբնութեան համար ապահով նիւթ:

*** Восточныя Замѣтки С. Петербургск. Универ. 1895 г. 227—228.

րելի է համեմատել chasse à courre-ի հետ: «Եղբայրաւքն» ընթերցուածը անշուշտ հին է և վաւերական: Գոյն այդ ձևը կայ և Սմբատ Վրկան—մարզպանի նամակներում (Ձեռ. Գիրք Թղթոց, Տես և Ուխտանէս, էջմ. 1871, եր. 59) Ալիշանն ունի «եղբարքն»: հաւանականաբար կոկուած, ընթերցուածը (Այրար. եր. 138):

ԺԱ հարցումը վերաբերում է վաճառականութեան և բաժի. ԺԲ-ը՝ նաւակի, հարկաւ Երասխի վրայ գործածուող նաւակի, ԺԳ հարցման մէջ խնձորների տեղը Խար, Խարա կամ Իխարա մնում է անորոշ: Մենք կարգում ենք ի Խար'այ:

ԺԴ հարցման մէջ առաջին անգամ հանդիպում է մեզ փաս' իբրև գինու չափ, նոյն չափն յիշուում Հիրակացու «Խրախձանականների» մէջ, ինչպէս կտեսնենք, Հայկ. Բառագիրքը մի վկայութիւն ունի այս բառին կանոնադրելից, նոյնպէս իբրև գինու չափ՝ «ԺՂ փաս քաղցու», բայց սխալ է մեկնում ասելով «փարչ» կամ ընթերցել թաս: Ընթերցուածի սխալ չկայ և փասը թաս չէ: Փասը գինու որոշ չափ է, թէև դեռ չգիտենք, թէ կարասի քանիերորդ մասը, նոյնահնչիւն է և նոյն իմաստն ունի գերմանական Fass-ը (=տակառ):

պ-րսի
խաւ

ԺԵ Հարց. մէջ հետաքրքրական են «կովեան, այծեան» և մանաւանդ «եզնի» ձևերը:

ԺԶ և ԺԷ հարցումներում խօսուում է եկեղեցու վրայ, «Գաղատոս» բառը ցոյց է տալիս, որ եկեղեցի շինողների մեծ մասը յոյներ էին այն ժամանակը, ինչպէս և այժմ: Արդէն Փաւստոսից գիտենք, թէ ինչպէս լաւ էին գնահատուում յոյն որմնաշէն—գաղատոսները (Փաւստ. Ե, 4): Թուերի մի քանի սխալներ Ա և Բ ձեռագրերն ունին միատեսակ, որից և հետևում է, որ այդ վրիպակ ընթերցուածները շատ հին են և այս երկու խմբերի անջատումից առաջ, Այս հարցում ԱԲ ունին միարան .ԱԵ. փոխանակ .ԼԹ.-ի, չորրորդ լուծման մէջ .ԱՄ. = .ԱՄ., Թ հարցման մէջ .Ձ. = .Կ., ԻԱ հարցման մէջ .ՇԾ. = .ՇԷ.

ԺԸ հարցում՝ նաւ կէտ, նաւահանգիստ, ինչպէս և ԻԴ-ում «աթենացոց քաղաքի» աւազանները ցոյց են տալիս, որ այս հարցումների նիւթն առնուած է բիւզանդական՝ հաւանականաբար՝ գրաւոր աղբիւրներից:

ԺԱ հարցման մէջ հանդիպում ենք ամանների, որոնցից «ապաղարէ» և «մեսուլը» առաջին անգամ: Ապաղարէի «ապարխարէ» և «ապարխարէ» ընթերցուածները մտնեցնում են այդ բառը մեր այժմեան «ապխարի» (պղնձի խորունկ աման, թանի, մածուկի համար գլխաւորապէս): Պէտք է որոնել պարսկերէնում:

ԻԱ հարցման մէջ վերջին անգամ յիշուում են Կամսարականները, Չի խնդրից վեցում յիշատակութիւն կայ Կամսարականների (Ա, Ե. Ը. Թ. Ի. ԻԱ), մնացածների մեծ մասումն էլ գործողութիւնը կատարուում է նրանց շուրջը, նրանց կալուածներում: Հիրակում, Երասխի, Ախուրեանի ափին, այնպէս որ այս թուարանական խնդիրների ժողովածուն կարելի է համարել Կամսարականների գիրքը, թերևս գրուած նաև մի Կամսարականի համար, Եթէ Մամիկոնեանների, Բագրատունիների, Արծրունիների նման չունեցան նրանք իրենց պատմիչը, այս ժողովածուն մասամբ լրացնում է այդ պակասը, ԻԱ հարցման մէջ յիշուած Արշաւրի որդիքը՝ Սահակ*, Ներսէս և Հրահատ Կամսարականները, նոյն այն Կամսարական-

* Այդ նշանաւոր արձանագրութիւնը կարօտ է վերաստուգութեան, Երակում եղած օրինակը շատ անբաւարար է: Արձանագրութեան մէջ յիշուած Մանան Հազարապետի մասին չ' Ալիշանն իրաւամբ ասում է, թէ Մանան հազարապետ անձանօթ է մեզ ի պատմութենէ, յետոյ աւելացնելով թէ «քաջիկ իմ քննելի են տառք արձանիդ, թերևս Մանան իցէ Վահան մեծն եւ քաջ Մամիկոնեան»: Բայց Վահան Մամիկոնեանը հազարապետութեան պաշտօն չէ վարել. յաջող ապստամբութիւնից յետոյ նա ստացաւ Վազարչից «Մամիկոնէից տէրութիւնը» եւ «հայոց սպարապետութիւնը» (Ղազ. 1891 եր. 607—608), յետոյ Անդեկանի միջնորդութեամբ նաեւ մարզպանութիւնը: Իսկ ապստամբութիւնից առաջ հաւատափոխ էր եւ «սուէհատի» վրայ հսկող, մի տեսակ՝ հանքերի վերակացու:

ներն են, որոնց յիշում է Ղազար Փարպեցին: Սահակի անունը պահուած է և Տեկորի արձանագրութեան մէջ, որ իմ գիտնալով հայ տառերով և հայ լեզուով հնագոյն արձանագրութիւնն է մեզ հասած (Շիրակ, եր. 132, տես և եր. 4) *:

Այս հարցման մէջ «յաղթել պատերազմաւ Բահղլճացն» եւ հասկանում եմ Բահլի (Առաւօտին) բնակիչներին, և ոչ թէ հիւսիսային (կովկասեան) լեռնականներին (տես Խալաթ. յիշուած երկ. I եր. 277, II, 64): Բոլորովին այլ է, մեր կարծիքով, Փաւստոսի յիշած «Բաղասճաց վաչկատուն ցեղը (Փաւստ. Գ, է):

Այս հարցման մէջ առաջին անգամն է պատահում գարիկ պետ[†] պաշտօնի անունը և խորաւարան[†] կամ խորթարան սպայապետի կոչումը (տիտղոս թէ ազգանուն): Իրանագէտներին է մնում մեզ բացատրել այդ և ճշտել: «Եւ եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն զ . Ժ . Զ . մասն գերւոյն» ասացուածը յիշեցնում է Ղազարի նման հատուածը, ուր նկարագրում է Վահանի ուխտը (Էջմիածնի) կաթուղիկէին **:

† Կարճիկ
† Խորաւարան
† Կարճիկ

Ի՞նչ հարցման լուծումը մեծ դժուարութիւն պատճառեց ինձ իւր առեղծուածական ձևովը: Թուերի (տառերի) երկար և խառնակ շարքը (տես Ա և Բ-ի ընթերցուածները Լուծմանց մէջ) մնում էր ինձ համար անվերծանելի իբրև մի ծածկագրութիւն: Հարկ եղաւ մանրակրկիտ խուզարկութիւն այդ առեղծուածը լուծելու համար: Լուծման բանալին տրուեց ինձ ԺԹ հարցումը իւր Լուծումով: Այդ խնդրի պատասխանը սովորական թուերով պէտք է լինէր՝ 21 ամբողջ և եօթն ութերորդական ($\frac{1}{8}$): ԺԹ Լուծումը այս պատասխանի փոխանակ տալիս էր՝ «իա, ց (կամ օ), զ, ը», ուրեմն և այս լուծման վերջին մասը՝ «ց, զ, ը» = եօթն ու թերորդականի ($\frac{1}{8}$): Անհրաժեշտ էր ուրեմն ենթադրել, որ մի կոտորակի փոխանակ ունինք երեքը, որոնց գումարը պէտք է հաւասար լինի եօթն ու թերորդականի ($\frac{1}{8}$): Եւ յիրաւի, զ նշանը համարելով մի քառորդ, ը նշանը—մի ութերորդ և ց նշանը—կէս կտտանանք ուղիղ պատասխանը ($\frac{1}{8} + \frac{1}{8} + \frac{1}{8} = \frac{3}{8}$): Այստեղ դիտելու մնում է դեռ մի ամենակարևոր կէտ: Ինչո՞ւ համար մի կոտորակի փոխանակ երեքը: Անհրաժեշտ էր դառնում ենթադրել, որ Անանիայի ժամանակ չէին ըմբռնում և չէին կարող գրել այնպիսի՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ քառք կոտորակ, որի համարիչը մէկից աւելի է: Պէտք է անպատճառ կոտորակն ունենար միաւոր համարիչ: Այսպէս ուրեմն՝ նրանք ասում էին հասարակ, երևոր, չորևոր, այսինքն է՝ կէս, մի երրորդ, մի չորրորդ, բայց չէին ասում՝ երեք քառորդ ($\frac{3}{8}$): Երեք քառորդի գաղափարը տալու համար ստիպուած էին դիմել միաւոր համարիչ ունեցող կոտորակն երի և ասել՝ կէս և մի քառորդ՝ և այս երկու թիւը չէին կարող գումարել: Այս նախապատրաստութիւնից յետոյ դառնանք Ի՞նչ հարցման լուծմանը:

(եր. 404): Իմ կարծիքով այդ արձանագրութեան մէջ յիշուած հազարապետը պէտք է լինի պարսիկ Վեհնամը, որ այդ հազարապետ էր միշտ Վահանի ապստամբութեան ժամանակ եւ ապստամբների երեսից փախաւ: Վեհնամ հազարապետը ընկելով էր Շիրակում, ուրեմն եւ Տեկորի մօտ (եր. 407, 415): Հազարի մէջ երկու անգամ է յիշում Վեհնամ հազարապետի անունը, տպագրում մի անգամ սխալ ընթերցումով Վեհ Վեհնամ (407), միւս անգամ ուղիղ՝ Վեհնամ (եր. 569): Հազար Փարպեցու միակ օրինակը, որից ծագել են շեմիածնի եւ Վենետիկ օրինակները— լոկ ընդօրինակութիւններ եւ այն ընդմիջարկութեամբ—երկու անգամն էլ ունի Վեհնամ: Հազարի ձեռագրերի մասին շուտով առիթ կունենամ խօսելու: Այսպէս՝ ուրեմն եթէ արձանագրի Մանանը այս Վեհնամն է, այն ժամանակ այդ արձանագրութիւնը կանուխ է Վահանի ապստամբութիւնից: Եւ որովհետեւ այս այբուբենի վերջնական կարգաւորումը Մեսրոպի ձեռքով յամենայն դէպս չէ առաջ 412 թուականից, ինչպէս առիթ կունենանք շուտով այդ տեսնելու, ուստի եւ հազիւ 70 տարով ուշ է այս արձանագրութիւնը մեր այբուբենի սկզբնաւորութիւնից: Թէ տառերի ձեւի եւ թէ բովանդակութեան կողմից հետաքրքրական այս արձանագրութեան լուսանկարը եւ էստամպը շատ կարևոր են. այլապէս անհնարին կլինի վերջնական եզրակացութեան հասնել:

** Եւ գային ի քաղաքն Վաղարշապատ . . . կատարէին զուխտս եւ զմուէրս ի սուրբ եկեղեցւոցն Կաթուղիկէի եւ ապա յերաքանչիւր տեղիս նահատակելոց կուսանաց. (Ղազ. Վեհն. 1891, եր. 615):

Պէտք է 100 կարաս գինին բաժանել 10 նախարարներին «ըստ տասնեկի պատուոյն»։ Այս փոքր ինչ անորոշ ասացուածը ես հասկանում եմ այսպէս. նախարարների տասն աստիճան կամ պատիւ կար, սկսելով ստորինից՝ երկրորդը առաջինի կրկինը պէտք է ստանար, երրորդը առաջինի երեքպատիկը, չորրորդը առաջինի քառապատիկը ևլն. Աւրեմն բաժանումը պէտք է լինէր յառաջատուութեամբ (progression)։ Այսպէս ըմբռնելով հարցումը՝ պատասխանը պիտի ստանանք.

ցածից սկսելով առաջին նախարարը կստանար $1 \frac{9}{11}$ կարաս գինի, երկրորդը $3 \frac{7}{11}$, երրորդը $5 \frac{5}{11}$, չորրորդը $7 \frac{3}{11}$, հինգերորդը $9 \frac{1}{11}$, վեցերորդը $10 \frac{10}{11}$, եօթներորդը $12 \frac{8}{11}$, ութերորդը $14 \frac{6}{11}$, իններորդը $16 \frac{4}{11}$ և տասներորդը $18 \frac{2}{11}$, գումարը = 100 կարաս։

Բայց մենք տեսնք, որ Շիրակացու ժամանակ չպիտի կարողանային գրել իննը տասն և մէկ երորդ ($\frac{1}{11}$), այլ այդ կոտորակը պիտի արտայայտէին մի շարք կոտորակներով որոնց համարիչը լինէր մէկից ոչ աւելի և գումարը հաւասար իննը տասն և մէկ երորդի, նոյն ձևով պիտի գրուէին և միւս կոտորակները։ Այժմ դառնանք մեր ձեռագրերին։ ԱՒ առաջին նախարարի ստացած բաժինը գրում են « Ե Ժ Զ Է »։ Մեր վերևում տուած բացատրութեան համաձայն այդ պատասխանը պէտք է վերծանել այսպէս՝ մի ամբողջ, կէս, մի հինգերորդ, մի տասներորդ, մի յիսուս և հինգերորդ, որի գումարը պէտք է հաւասար լի մի ամբողջ և իննը տասն և մէկ երորդի, եթէ միայն ուղիղ էին մեր վարկածները, եւ յիշուի՝

$$1 + \frac{1}{2} + \frac{1}{3} + \frac{1}{10} + \frac{1}{55} = 1 \frac{9}{11}$$

Աւրեմն առեղծուածը կարելի է լուծուած համարել. Բոլոր տասն շարքի կոտորակներն էլ արդարացնում են մեր բացատրութիւնը։ Պատասխանի ընթացուածները և մեր վերականգնած բնագիրը տես Լուծմունքներում։ Զ-ներում կէտերը, կոտորակների վրայ դրուած թաւերը տեղ տեղ շփոթուած են, պատահում են և սովորական վրիպակներ (է=ե, գ=գ ևլն), բայց առեղծուածաւոր շարքերի յաջող վերծանութիւնը բոլորովին ապահով է։

Եթէ այս այսպէս է՝ և մեր ապացուցութիւնը հիմնաւոր, ապա ուրեմն հարկ կլինի ընդունել և այն, որ մինչև մեր այս բացատրութիւնները՝ ուղիղ չէին հասկացուում մեր հին մատենագրութեան մէջ պատահող բոլոր այն հատուածները, որոնց մէջ «բարդ» այն է՝ մի համարիչից աւելի ունեցող կոտորակներ կան։ Այդպիսի կոտորակները պիտի արտայատուէին անհրաժեշտաբար մի շարք «պարզ» կոտորակներով։ Մեր այս բացատրութիւններից յետոյ այդպիսի հատուածների ուղիղ ըմբռնումը հնարաւոր է դառնում և բոլորովին դիւրանում։ Բերենք երկու օրինակ. Հանգուցեալ Ք. Պատկանեան իւր լուրջ և գիտնական մի հրատարակութեան մէջ (Армянская География VII вѣка по Р. X. = «Եօրենացու» Աշխարհագրութիւն, Պետերբուրգ 1877) հանդիպում է մի այդպիսի հատուածի, հարկաւ առանց կարողանալու կնճիւղը լուծել. «...Մասն է հինգ հարիւր ասպարէզ... չորեքհուսի որպէս զի լինել մասսինն եւ թանասուն և մի մղոն, չորք եւ թն է քսան և ութ» (Հայերէն բնագ. եր. 3)։ Առևսերէն թարգմանութեան ծանօթութեան մեջ (եր. 9, ծնթ. 16) իրաւամբ նկատում է, որ բնագիրը մութն է, ինքը տալիս է կարելի միտքը. մղոնն հաշուելով 7 ասպարէզ, մի մասում (աստիճան) պիտի լինի ոչ թէ 71, այլ 71 և երեք եւ թն երորդ ($\frac{1}{11}$) մղոն*։ Բայց բնագրում հէնց այդպէս էլ է, միայն թէ չէ հասկացուել 71 մղոն, մի չորրորդ (չորք), մի եւ թն երորդ (եւ թն), մի քսան և ութ երորդ (քսան և ութ), որոնց գումարն անում է երեք եւ թն երորդ. $71 + \frac{1}{4} + \frac{1}{7} + \frac{1}{28} = 71 \frac{5}{7}$

* Ահա հատուածիս թարգմանութիւնը «Такъ что въ градусѣ заключается 71 миля; (а четыре стороны квадратной мили) равняются 28 аспарезамъ, ибо 4 раза 7 составляетъ 28.» Փակագծից սկսած ամբողջ տողի փոխարէն պիտի լինէր միմայն՝ երեք եւ թն երորդ։

Աւելի անաղարտ է պահուած բնագիրը Լ. Արսէն Սուքրեանի հրատարակութեան մէջ, թէև այստեղ էլ թարգմանիչը վրիպել է ուղիղն ըմբռնելուց: Ահա այդ ուղղագոյն բնագիրը. «որպէս զի լինել մասինն եօթանասուն և մի մղոն և չորեակ ($\frac{1}{4}$), եօթնեակ ($\frac{1}{2}$) և քսան և ութեակ մի ($\frac{1}{8}$)»* Նախնական բնագրում ամենայն հաւանականութեամբ էր «եօթանասուն և մի մղոն և . դ. է, ի ը.», Երկրորդ օրինակ, Սուքրեանի հրատարակած աւելի ընդարձակ բնագրում կայ մի հատուած, որտեղ հանդիպում է մեր «կէս» ցոյց տուող նշանը (C), բայց ուղիղ չէ հասկացուել. «Յեռոն . . ծայրն ի ներքս գայ ի յովկիանոս առաւել քան զայլ երկիր՝ մասունս երիս, [C], որ լինի ասպարէզք հազար հինգ հարիւր յիսուն» եր. 14: Հրատարակիչն աւելացնում է ծանօթութեան մէջ. «Յօրինակին կայ առ երիս բառի՝ ձև մի իբրև C, որ թուի նշանակել զտասներորդ մասին, այսինքն զաստիճանի. զի զմասն ասաց 500 ասպարէզ լինել, և երեք մասունք լինի 1500. իսկ աստ աւելի կայ և 50 ևս որ է $\frac{1}{10}$ (մի տասներորդ) մասին»: Բայց մենք շատ օրինակներից տեսանք, որ C նշանը ոչ թէ մի տասն երորդ, այլ կէս է նշանակում, որի վրայ և հիմնուած կարող ենք վերականգնել բնագիրը՝ հինգ հարիւրը սրբագրելով եօթն հարիւր (ե=է) = մասունս երիս և C (կէս), որ լինի ասպարէզք հազար եօթն հարիւր և յիսուն» (Կէս աստիճանն = 250 ասպարէզ):

Այս օրինակները բացի այն, որ վերստին երաշխաւորում են մեր բացատրութեանց հիմնաւորութեանը, մեզ մատնացոյց են լինում նաև մի ներքին կապի վրայ, որ կայ Հիրակացու և «Խորենացու» Աշխարհագրութեան մէջ, Հիրակացու կոտորակները, բուլորովին յար և նման ձևով գործ են ածուում ուրեմն և այդ երկասիրութեան մէջ. Յայտնի է, որ Պատկանանը տրամադիր էր «Խորենացու» այդ Աշխարհագրութիւնը՝ թէև ենթադրաբար միայն և առանց դրական ապացոյցների վերագրել Հիրակացուն (տես ուս. թրգ. յառաջաբան):

ԻԳ հարցման մէջ մկները կերել են Հիրակացու ամբողջ 200 կայթ գարին, կայթն ունինք գործածուած Սուրբ Գրքում զանազան առմամբ (տես Յ. Աւգեր. Բացատր. 2ափ. և Կշ. կայթ և գոմոր բառերը, նաև Հայկ. Բառ.): Այժմ միայն Հիրակացու այս հարցումը հնարաւորութիւն է տալիս մեզ ճիշտ որոշել կայթի չափը, կշիռը. Պատասխանից երևում է, որ .ՃԳ 8Պ. է եղել մկների թիւը, այն է՝ 103 բիւր և 6800 մուկ, իւրաքանչիւրը կերել է 80 հատ գարի, Բոլոր կերած գարին, որ 200 կայթ էր, հաւասար է 80 անգամ 1,036,800, որ անում 82,944,000 գարեհատ, կամ հայկական թուերով .Փ՝ՄՂ՝Պ Տ., ուրեմն մի կայթն ունի 414,720 գարեհատ, կամ աւելի կարճ՝ մի կայթըն է վաթսուսուն լիտր (Լիտրը 12 ունկի, ունկին 576 գարեհատ, (տես Յող. 2ափ. և Կշ.): Այսպիսով ուրեմն ճիշտ որոշուում է կայթի չափը, այն է՝ 60 լիտր, կայթն հանդիպում է և արձանագրութեանց մէջ, Հայոց .ՆԻ. թուին Խորովանոյշ թագուհին հաստատում է Տեկորի իւղի շարեատը մի կայթ, ուրեմն 60 լիտր (Հիրակ. 133):

ԻԴ հարցումը, ինչպէս արդէն նկատեցի, հաւանականաբար Հիրակացին առել է գրաւոր աղբիւրից, կամ լսել է Տիւբիկոսից, Խնդրի պատասխանը պէտք է լինի 32 վայրկեան և ութ տասն և մէկ երորդ ($\frac{1}{10}$), մինչդեռ Լուծման կոտորակների գումարն է 32 և մի տասն երկու երորդ վայրկեան կամ՝ 32 վայրկեան և 5 մանրերկրորդ, Երևի զանց են առնուած աւելի մանր կոտորակները.

50 մարտի.

Գալուստ Տ. Միրտչեան.

* Փրանսերէն աղալող թարգմանութիւն է «la partie est de 500 stades carrés, ainsi la partie fait 71 milles et quatre fois sept (?) et vingt—huitième. (Géographie de Moïse de Corène, par Ar-sène Soukry, Venise 1881, p. 4, եր. 7):

(Բ73a) ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՇԻՐԱԿՈՒՆ[Ի]ՈՅ

[ՅԱՂԱԳՍ] ՀԱՐՑՄԱՆ ԵՒ ԼՈՒԾՄԱՆ

Ա Հարցումն. Ա յայէս լուսայ¹ ի հաւրէն² իմէ³, եթէ⁴ ի ժամանակի պատերազմացն⁵ Հայոց ընդ Պարսս⁶ սաստիկ քաջութիւնք⁷ լինէին
 5 ի պամարականէն Չաւրակայ, որպէս⁸ թէ ամաւրեայ աւարքը երիցս յարձակեալ ի վերայ զաւրացն պ[ա186a] սրոից՝ և հարկանէր յառաջնումն զկէս զաւրուն. և ի հետ մտեալ հարկանէր յերկրորդումն⁹ զչորրորդ մասն զաւրուն. և յերրորդումն¹⁰ զմետասաներորդն¹¹: Եւ մնացեալքն անկանէին փախստեայ¹² ի նախնաւան, թուով . ԾԶ.:

10 Արգ պարտիմք և մեք իմանալ մնացելովքս, եթէ⁴ յառաջ քան զկոտորումն ճրջափ էին:

Բ Հարցումն. Ա յր մի յիմոց մերձաւորաց գումարտ լեալ ի Բահ՛ եգիտ մարգարիտ շահուալ¹: Եւ դարձեալ ի տուն և հասեալ ի Դանձակ² վաճառեաց զհասարակ մարգարտին³ զհատն յիտուն⁴ դրամ: Եւ եկեալ
 15 [ա186b] ի նախնաւան⁵ վաճառեաց զչորեւոր մասն մարգարտին եւթանասուն⁶ դրամ զհատն⁷: Եւ հասեալ ի Դուին⁸ վաճառեաց զերկոտասաներորդ⁹ մասն մարգարտին¹⁰ զհատն . Ծ. դրամ: Եւ մինչ¹¹ ի Շիրակ սու մեզ եկին և ունէր մնացեալ մարգարիտս¹² հատս . Ծ. Պ. Արգ գիտեալ¹³ մնացելովքս¹⁴, թէ ամենայն¹⁵ քանի՞ մարգարիտ¹⁶ է և կամ քանի՞
 20 դրամ¹⁷ գինք մարգարտին:

Ա

1. Ա զուա.
2. Ա ի հաւրէն. Բ ի հօրէն
3. Բ իմէ
4. Ա եթէ
5. Բ պատերազմաց
6. Բ ընդ պարս
7. Բ քաջութեամբ
8. Բ գաղափարագիր.
9. Բ և ի յերկրորդումն.
10. Ա և յերկրորդումն
11. Բ զմետասաներորդ
12. Ա փախստեայ. Բ ի փախստեայ

Բ

1. Բ շահաւոր
2. Բ ի գանձանակ
3. Բ «մարգարտին»
4. Բ «Ծ.»
5. Բ « ի նախնաւան»
6. Ա «յեւթանասուն» «յ» գիրը ընդման նշանով.
7. Բ զհատն .Ը. դրամ
8. Ա ի թվին»
9. Բ զ .Ժբ. աներորդ»
10. Բ շիք
11. Բ և մի ինչ»
12. Բ զմնացեալ մարգարտին»
13. Բ և արգ գիտեայ»
14. Բ զմնացելովքս»
15. Բ ընդ ամենայն»
16. Ա Բ «մարգարտին»
17. Բ «դրամք»

9. Հարցումս. Այսպէս լուս[ւ] ի վարդապետէն, եթէ ¹ գողեան մօտին ի Մարկիանոն Տրիկլին ² [բ73b] և գողացան զկէս և զչորևոր գանձուն. և մտեալ [ա187a] գանձաւորացն գտին .նիւ. կենդինար և .վ. և .ն. գահեկան ³: Արդ գիտեա՞ ի մնացելոցն, թէ ամենայնն որչափ էր գանձին ⁴:

25 Դ. Հարցումս. Հոգ ¹ ուխտին ² Սրբոյ Սոփեայ ³ զհինգ ⁴ մասն առնուն սարկաւազունքն և տասն ⁵ մասն առնուն քահանայքն և .Մի. լիտր առնուն եպիսկոպոսունքն և .Ս. ⁶ լիտր ⁷ այլ ուխտն: Արդ գիտեա՞ թէ ընդ ամենայն ⁸ քանի՞ լիտր ⁷ լինի հոռքն ⁹:

Յ. Հարցումս. Հոգ սպայիցն ¹ բաշխի այսպէս. չորս ² մասն պատուաւորացն ³, .ը. մասն աւագացն ⁴ և .ձՄ. կենդինար այլ հեծելոցն: Արդ գիտեա՞ թէ ընդ ամենայն ⁶ քանի՞ կենդինար լինի:

[ա 187b] Զ. Հարցումս. Հազար կայր իմ ի պարտիղի ² և հոռոմ մի եմնւտ ի պատճառս զբաւսանաց և ³ եկեր զհինգ և զ.ժ.ե ⁴. մասն հազարոյն: Եւ իմացեալ իմ զսրկարէութիւն ⁵ առն հանի զնա ⁶ արտաքս և մտեալ համարեցի և գտի ունջ .ձ. և .ժ. ⁷: Արդ գիտեա՞ թէ ընդ ամենայն քանի՞ ունջ լեալ է հազարն և կամ քանի՞ ունջ կերեալ է հոռոմին ⁸:

Է. Հարցումս. Ես ի Մարմետի էի ¹, յոստանի կամ [ս]արականաց ²,

- 1. Ա «եթե»
- 2. Բ «ի մարկեանոն ատրիկլին»
- 3. Բ «գտին .նիւ. կենդինար .գ. ո. և շ (= .Գ.Ռ. պն է՝ .վ. = 3000 և Ո. = 600)
- 4. Բ «Արդ գիտեայ ի մնացելոցն, թէ ընդ ամենայն որչափ լինէր գանձն»

- 1. Բ «հոգ»
- 2. Ա «ուխտն»
- 3. Բ «սրբոյն Սոփեայ»
- 4. Բ «գ.ե.»
- 5. Բ «գ.ժ.»
- 6. Բ «բա.»
- 7. Ա «լիտր»
- 8. Ա «ընդ ամենայնն»
- 9. Բ «հոռք»

- 1. Բ «սպայիցն»
- 2. Բ «.գ.»
- 3. Ա «պատս. ուաւորացն». Բ «պատուաւորաց»
- 4. Բ «աւագաց»
- 5. Բ «գիտեայ»
- 6. Ա «ընդ ամենայն»

- 1. Ա «չիք»
- 2. Բ «իմ պարտիղի»
- 3. Բ «չիք»
- 4. Բ «և զ .ժ.» (= ժե = 15)
- 5. Բ «զորկորութիւն»
- 6. Բ «զնայ»
- 7. Բ «հարիւր և .ժ.»
- 8. Բ «Արդ գիտեայ թէ ամ քանի ունջ լեալ է հոռոմին»

- 1. Բ «[]ս ի մարմետի է ()»
- 2. Ա «կամարականաց» Բ «կամարակայանաց»

և երթեալ յեզր գետոյն, որում⁵ Ախո[ւ]րեանն⁴ կոչեն, տեսի⁵ երամս
 40 ձկանց և ետու արկանել ուռկան⁶: Եւ հանին զհասարակն⁷ և զօր⁸
 և զօր. [ա 188a] երամոյն: Եւ որ յուռկանէն զերծաւ ի թարի ընկաւ.
 և անցեալ գտի զնոսա քառասուն և հինգ⁹: Արդ գիտեա սոքաւք, թէ
 ընդ ամենայն¹⁰ երամն քանի՞ ձուկն լեալ է:

Ը Հարցումն. Ի ժամանակի ապտամբութեանն հայոց ի պարսից և
 45 սպանանելոյն¹ Կամսարականին Ջաւրակայ² զՈւրէն, դեսպան արձակեաց
 ոմն յազատաց³ հայոց առ թագաւորն պարսից գոյժ արկանել նմա. և
 գնայր աւուրն յիսուն⁴ մղոն: Եւ զկնի օժև աւուր իմացեալ Կամսարա-
 կանին Ջաւրակա[ւ] հետամոխիս առաքէր զկնի ունել զնա⁵, որք գնային
 աւուրն .2. մղոն: Արդ գի[ւ]տեա⁶, եթէ քանի՞ աւուր հասանէին
 50 նմա⁷,

Թ Հարցումն. Որս էր Կամսարականացն ի Գէն¹ և կալեալ էր երէ²
 բազում. [բ 74a] և ինձ որսամասն³ ետուն ըերել վարազ մի: Եւ վա-
 սըն զի անարի էր տեսլեամբն՝ կշռեցի⁴ և գտաւ փորոտին .9. մասն
 ամենայն կշռոյն⁶, և գլուխն .3. մասն, ոտքն .1. ⁷, ժանիքն .9. ⁸, ան-
 55 ձրն .15. և .15. լիտր⁹. Արդ գիտեա¹⁰, թէ ընդ ամենայն քանի՞ լիտր
 էր վարազն:

Ժ Հարցումն. Լոք¹ մի կալան ի Մարմետի² ի գետն Երասխ³ և ես
 կշռեցի զնա և գտաւ գլուխն չորս⁴ մասն ամենայն կշռոյն, և տուտն

- 3. Բ «յորում»
- 4. ԱԲ «ախորիեանն»
- 5. Բ «և տեսի»
- 6. Բ «ուռկանս»
- 7. Բ «զհասարակ»
- 8. Ա «պակասում է «և զ.գ.»
- 9. Բ «զնոսայ .ի. և .ե.»
- 10. Բ «թէ ամենայն»

- 1. Ա «սպանելոյն»
- 2. Բ «կասարականին և զօրակայ». Ա «զաւրակա»
- 3. Ա «արձակ ոմն յազատաց»
- 4. Բ «.ծ.»
- 5. Բ «զնայ»
- 6. Բ «գիտեայ»
- 7. Բ «նմայ»

- 1 Ա «ի քէն»
- 2. Բ շիք
- 3. Բ «որսայմասն»
- 4. Բ «կշռեցին»
- 5. Բ «չորս»
- 6. Բ «կշռոցն»
- 7. Բ «ոտքն .ի. մասն»
- 8. ԱԲ «զ»=6, Պէտք է ուղղել՝ .2.=90:
- 9. Ա «լիտր»
- 10. Բ «գիտեայ» Եյսպիսի ուղղագրութեամբ և ներքևում:

- 1. Ա «լոկ»
- 2. Բ «մարպետին»
- 3. Ա «ի գետ Երասխ»
- 4. Ա «.գ.»

60 •Զ. և մէջքն •ձն. լիտր: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն⁵ քանի՞ լիտր էր:

[ա 189a] ԺԱ Հարցումն. Այր մի վաճառական էանց ընդ երիս քաղաքս և բաժ¹ արարին յառաջնումն և հանին զկէս² և գերեւոր իրացն: Եւ յերկրորդ քաղաքին թուեցին զոր ինչ ունէրն և հանին³ զկէս² և գերեւորն. և յերրորդ քաղաքին անդրէն այլ թուեցին և հանին զկէս և գերեւորն⁴: Եւ մինչ ի տուն եկն⁵ մնացեալ էին դահեկանք •ԺԱ.: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն քանի՞ դահեկան ունէր:

ԺԲ Հարցումն. Նաւակ մի առնել կամէի և իմ •Գ. գրամկուռք իսկ կային և այլ ինչ ոչ կայր. և ասացի ցմերձաւորս իմ՝ Տուք ինձ մէն մի¹ սակաւ ինչ, որ առնեմ [ա189b] զնաւակս: Ոմն եա •Գ. կշռոյն, և ոմն եա զ•Գ.², և ոմն զ•Զ., ոմն զ•Է., և ոմն զ•ԻԸ.³: Եւ իմ առեալ արարի զնաւակն: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն քանի՞ գրամ էր նաւակն:

ԺԳ¹ Հարցումն. Ոմն յաշակերտաց իմոց առեալ խնձորս գեղեցիկս ի Խարայ գայր ընծայեցուցանել ինձ: Պատահեցան նմա երեք² պարք ի խաղուց³ և հանին՝ առաջին պարն զկէսն և զ•Գ. մասն խնձորոյն, նոյնպէս և երկրորդն զկէսն և զ•Գ. մասն⁴, նոյնպէս և երրորդն⁵: Եւ զմնացեալսն⁶ եբեր առ իս խնձորս •Ե.: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն քանի՞ լեալ է⁷:

ԺԴ¹ Հարցումն. Գինի կայր ի մի կարասի. վա[ա190a]րդիւ կազմեալ էին. և թակոյկք կճեա[ւ] երեք²: Եւ հրամայեցի հանել զգինին անդր. մին տարաւ զերեք³ մասն և մինն զ•Զ.⁴, իսկ միւսն զ•ԺԳ.⁵, և զմնա-

5. Ա «ընդ ամեն». այսպէս և ներքևում:

ԺԱ

- 1. Բ «բաժ». յետոյ սրբագրած՝ «բաժին»
- 2. Բ «զկէսն»
- 3. Ա «և հան. և հանին»
- 4. Բ «զկէս գերեւորն»
- 5. Ա «եկ»

ԺԲ

- 1. Ա «մեն մի»
- 2. Ա «և մն զ•գ.»
- 3. Բ «զ•իէ.» սխալ ընթերցուած = .ԻԸ.:

ԺԳ

- 2. Բ չիք
- 2. Ա «երե» Բ «.Գ.»
- 3. Ա «ի խաղոց»
- 4. Բ չիք «խնձորոյն, նոյնպէս և երկրորդն զկէսն և զ .Գ. մասն»
- 5. Բ. «երրորդ»
- 6. Բ «զմնացեալս»
- 7. Բ «էր»

ԺԴ

- 1. Բ սխալմամբ «ԺԳ»
- 2. Բ «և թակոյկ գ. կըճայք»
- 3. Բ «զ .գ.»
- 4. Բ «մին զվեցն»
- 5. Բ «զ .ժգ. սն»

ցեալն⁶ այլ ամանս հանին, և էր փաս ԹԳ: Արդ գիտեալ թէ ամե-
նայնն⁷ քանի՞ էր լեալ:

ԺԾ¹ Հարցումն. Ձի մի կայր ինձ ազնիւ² վաճառեցի և գնոցն Գ. մա-
սինն կովեան գնեցի³, [բ74a] և Ե. մասինն այժեան, և Ժ. մասին եզ-
նի, և ՅԺԸ. դահեկանի ոչխարս առի: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն
քանի՞ դահեկան լինի:

ԺՉ¹ Հարցումն. Ես եկեղեցի շինէի. գաղատոս մի կալայ², որ ա-
ծէր աւուրն ԶԽ. քար, և յետ [ա190b] ԵԹ. աւուր գործառնու-
թեանն⁴ միւս այլ գաղատոս կալայ², և ածէր աւուրն ՄԺԸ. քար: Եւ
որպէս նա նմա⁷ հաւասարեաց՝ եկեղեցին կատարեցաւ: Արդ գիտեալ ե-
թէ ի քանի՞ աւրն⁷ հաւասարեաց:

ԺԷ¹ Հարցումն. Նաւ մի երթայր լի ցորենով և կէտ մի զհետ մը-
տեալ նաւին՝ նաւորդքն² երկեան և ընկեցին նմա³ կեր զհասարակ⁴ ցո-
րենոյն: Եւ ԵԲ. աւուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն. յերրոր-
դումն⁶ զԸ. ի չորրորդումն զԵ. Ապա ի նաւահանգիստն⁷ հասին և
մնաց ԻՄ. Արդ գիտեալ թէ ընդ ամենայնն⁸ քանի՞ լեալ էր:

ԺԸ¹ Հարցումն. Ապաղարէ² մի էր իմ [ա191a] խանդարեցի³ և այլ
ապաս արարի. զԳ. մասն մեսուր մի արարի և զչորրորդ մասն այլ⁴ մե-
սուր արարի և զԵ. մասն⁵ Բ. բաժակս արարի և զվեցն երկու⁶ ըս-

6. Բ «զմնացեալան»

7. Բ «ընդ ամենայն»

ԺԵ

1. Բ սխալմամբ «ԺԳ»

2. Բ «Զի կայր ազնիւ»

3. Բ «և գնեցի Գ. մասեանն կովեան»

ԺԶ

1. Բ սխալմամբ «ԺԵ»

2. Ա «կալա»

3. ԱԲ «լէ» Անշուշտ ուղղելի՛ «ԼԹ»

4. Ա «գործառնութեանն»

5. Բ «բձ. և ժր.»

6. Բ «նմայ»

7. Բ «թէ քանի՞ օր»

ԺԷ

1. Բ սխալմամբ «ԺԶ»

2. Բ «նաւորդք»

3. Բ «նմայ»

4. Բ «զհասարակաց»

5. Բ «յերկու»

6. Բ «և յերրորդումն»

7. Բ «և ապա և ապա ի նաւահանգիստն»

8. Բ «ընդ ամենայն»

9. Ա «լեալ»

ԺԸ

1. Բ սխալմամբ «ԺԷ»

2. Բ «ապարիարէ»

3. Ա «խանկարեցի»

4. Բ չունի «մեսուր մի արարի և զչորրորդ մասն այլ»

5. Բ «և զ Ե. մասն և զ Ե. մասն»

6. Բ «բ.»

կուտեղս արարի. և երկու հարեր և .յ. 7 դրամէ սկաւառակ մի արարի: Արդ գիտեալ թէ ընդ ամենայնն քանի՞ էր լեալ ապաղարէն 8:

ԺԹ Հարցումս. Այր մի յերիս եկեղեցիս եմուտ 1 և խնդրեաց յաստուծոյ յառաջնումն, եթէ 2 ճուր ինձ որչափ ունիմս և տամ քեզ .ի.ե. դահեկան: Նոյնպէս և յերկրորդումն ետ զ.ի.ե.ն, նոյնպէս և յերրորդումն 3: Եւ առ իւր ոչինչ մնաց 4: Արդ գիտեալ թէ [ա191b] յառաջն քանի՞ ունէր:

Ի Հարցումս. Ներսէհի Կամսարականի Շիրակայ 1 և Արշարունեաց տեառն բուն կանգնէր առ ստորոտով լերինն, որում Արտին կոչեն: Եւ ի գիշերի միով մտին երամակք ցուց բազումք: Եւ ոչ լեալ ատակ որսորդացն՝ ընթացեալ 2 պատմեցին նմա ի գեաւղն թալին 5: Եւ նորա իւրովի 4 եկեալ հանդերձ եղբայրաւքն և ազատաւքն 5 [բ75a] և մտեալ կոտորէին զերէօն: Եւ եղեն կալեալք ի թակարդի 6 հասարակ երէոցն. և եղեն սպանեալքն նեոիւ չորս 7 մասն. և զմատաղերէն ողջ կալան, որ եղև .յ.բ. 8 մասն. [ա192a] և եղեն մեռեալք ի նիզակէ .Յ.Կ. 9 երէ: Արդ գիտեալ թէ ընդ ամենայնն 10 քանի՞ լեալ էին:

ԻԱ Հարցումս. Ներսէհ Կամսարական որդի Արշաւրի 1, անուանակից և նախնի այսմ՝ Ներսէհի 2, ի յաղթել պատերազմաւ 3 Բահղլճացն 4 առնու գերի սաստիկ յոյժ: Եւ հասեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ թագաւորին պարսից զհասարակ գերւոյն: Եւ թուեալ 5 զհասարակն՝ ևս ընծայէ որդոյ 6 արքայի զ.է. մասն: Եւ հրաժարեալ ի նոցանէ դառնաւ [ւ] յաշխարհն 7 իւր: Եւ եկեալ ի տուն 8 գարիկպետի՝ յոյժ մեծարի

7. Բ «.մթ.»
8. Բ «ընդ ամենայն քանի լինէր ապարիսօրէն»

ԺԹ

1. Բ «մտանէր»
2. Բ «թէ»
3. Բ «և յերկրորդումն նոյնպէս .ի.ե. և յերրորդումն»
4. Ը «չմնաց»

Ի

1. Ա «Շիրակա»
2. Ա «ընթացեալք»
3. Բ «նմա ի գեղն թողին»
4. Բ «իւրովին»
5. Բ «եղբայրքն և ազատաւքն»
6. Ա «ի թակարդի. աւելորդ է են ջնջիչ նշանով. Բ «ի կաթարթին»
7. Բ «.գ.»
8. Բ «.բթ.ան»
9. Բ «.գճկ.»
10. Բ «թէ ամենայն»

ԻԱ

1. Ա «արշարի» Բ «արշորի»
2. Բ «ներսէհի»
3. Բ «պատերազմացն»
4. Բ «Բաղլճեացն»
5. Բ «թողեալ»
6. Բ «որդոյ»
7. Բ «յաշխարհս»
8. Բ «ի տունս»

ի նմանէ: [ա192b] ոչ որպէս⁹ զնախարար, այլ որպէս⁹ զմի ոք ի թագաւորաց: Եւ սա տայ¹⁰ նմա¹¹ զօջ մասն գեր[ւ]ոյն: Եւ եկեալ առ
 125 սպայապետն¹², զոր խորաւարանն¹³ կոչեն, և առաւել ևս ի նմանէ մեծարեալ¹⁴ տա[ւ] նմա զօջ մասն գեր[ւ]ոյն: Եւ ևս յառաջ եկեալ հասանէ յաշխարհ իւր՝ և ընդ առաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր¹⁵ Հրահատ, և տա[ւ] նմա զօջ մասն գերւոյն¹⁶: Եւ ևս յառաջ եկեալ ընդ առաջ¹⁷ լինին նմա ազատքն հայոց և տայ նոցա զինն մասն գերւոյն¹⁸: Եւ եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն¹⁹ զօջ մասն գերւոյն¹⁶: Եւ եկեալ Սահակ աւագ²⁰ եղբայր իւր՝ տա[ւ] [ա193a] նմա զօջ մասն գերւոյն¹⁶: Եւ իւր մնաց յՇՀ՝²¹ անձն²²: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն քանի՞ է լեալ²³:

ԻԲ Հանրցումն. Փարաւոն արքայ եգիպտաց[ւ]ոց պատուէր զաւր ծընընդեան իւրոյ և սովորութիւն¹ էր նորա յաւուրն յայնմ տալ օջ նախարարացն ըստ տասնեկի² պատուոյն օջ կարաս գինի խնկով³ կազմեալ: Արդ բաժանեց իր⁴ զայդ⁵ ըստ պատուոյն⁶ օջ տասնեկին⁷:

ԻԳ Հարցումն. Շտեմարան¹ մի² էր իմ յորում կայր³ գարի կայթ Մ. 4: Մկենբ մտին և զամենայն գարին կերան⁵: [ա75b] Ես մուկին⁶ մի կալայ ի նոցանէ և պատուհասեցի: Նա խոստով[ա193b]անեաց⁷ և ասէ. Յիս 9: հատ եհաս: Արդ գիտեալ թէ ընդ ամենայն քանի՞ հատ լեալ էր⁸ յշտեմարանին և կամ քանի՞ մկուկն որ կերան⁹:

- 9. Բ գաղափարագիր.
- 10. Ե «սա»
- 11. Բ «ևս տայ նմայ»
- 12. Բ «սպայապետն»
- 13. Ե «խաւարանն» լուսանցքում աւելացրած «որ» = «խորաւարանն», Բ «խորթարանն»
- 14. Ե «մայնեալ»
- 15. Բ «կրտսեր»
- 16. Բ «գերոյն»
- 17. Բ «ընդ յառաջ»
- 18. Բ «և տա նմայ զ օջ մասն գերոյն»
- 19. Բ «ի սուր եկեղեցիսն տայ»
- 20. Բ «աւագ»
- 21. Ե «շճ» Բ «եճ» ուղղելի շճ. «Մ» = Լ.
- 22. Բ չիք
- 23. Բ «ընդ ամենայն քանի՞ լեալ էր»

ԻԴ

- 1. Ե «սովորութիւնն»
- 2. Ե «օ.եկի» Բ «օ.նեկի»
- 3. Ե չիք.
- 4. Բ «բախանեց իր»
- 5. Բ «զայտ»
- 6. Ե «ըստ պատուոյն»
- 7. Բ «ճ. ու օ.նեկին»

ԻԵ

- 1. Ե «ըշտեմարան»
- 2. Բ չիք
- 3. Բ «կայի»
- 4. Բ «բճ.»
- 5. Բ «և կերան զամենայն գարին»
- 6. Բ «և ես մուկ»
- 7. Բ «խոստովանեցաւ»
- 8. Բ «ընդ ամենայն քանի՞ է հատ լեալ էր»
- 9. Բ «մկուկն որ կերան»

Ի՞նչ Հարցումն. երեք աւագանք էին ի քաղաքին աթենացոց ¹ միա-
 չափք և երեք ² ագուգայք գային յաւագանսն ³; Մի ⁴ ագուգայն քանզի
 445 յորդ էր ⁵ ի ժամ մի ընդր զաւագան[ս]ն. երկրորդն ⁶ նուազ քան զնա՝
 յերկու ժամս ⁷ ընդր ⁸. և երրորդն ⁹ առաւել նուազ՝ յերեք ժամս ¹⁰ ը-
 նդր ⁸; Արդ գիտեա՛ թէ մինչ ի միասին խառնին ագուգայքն՝ ի քան-
 երորդ ¹¹ մասն ժամու ընուն ¹² զաւագանսն:

450 Լուծումն Ա հարցմանն. [ա194a] Յառաջ քան զկոտորածն էին
 •ՌԶԿ• ¹ Հեծեալ:

Լուծումն Բ հարցմանն. Լեալ էր ¹ մարգարիտն Հարեւր և քառա-
 սուն և չորս ² հատ և գին մարգարտին •ՅԶԻ• դրամ:

Լուծումն Գ հարցմանն. ¹ Լեալ էր ² գանձն կենդինար ⁵ •ՌՈԶԶ•:

Լուծումն Դ հարցմանն. Լինի հող ¹ ուխտին •ՎՄ• ² լիտր ³:

455 Լուծումն Ե հարցմանն. Լինի հող ¹ սպայիցն կենդինար ² •ՄԻ•:

Լուծումն Ջ հարցմանն. Լեալ էր ունջ ¹ հազարոյն •ՃԾ•:

Լուծումն Է հարցմանն. Լեալ էր ¹ ընդ ամենայն ձուկն •ՆԻ• ²:

ԱԳԷ

1. Բ. «աթենացոց»
2. Բ. «բ.»
3. Ա. «քային յաւագանն»
4. Բ. «մին»
5. Բ. «յորդոր է»
6. Ա. «երկրորդ»
7. Բ. «ի .բ. ժամն»
8. Բ. «ընդր զաւագանն»
9. Ա. «երեքն» Բ. «և .գ.ն»
10. Բ. «ի յերրորդ ժամն»
11. Բ. «ի քանի՞ երրորդ»
12. Բ. «ընու»

Ա

1. Բ. «.ա.է.ճկ.»

Բ

1. Ա. «լեալ է»
2. Բ. «.ճխդ.»

Գ

1. Ա. «գրեթէ միշտ համառօտ՝ «լուծ», «լուծմունք», «լծ» և ըն.
2. Ա. «լեալ է»
3. Ա. «կենդ»

Դ

1. Բ. «հողք»
2. Ա. Բ. «.վո.» = 3600, պէտք է լինի .ՎՄ. = 3200, Ո = Մ, երկաթագրի վրիպակ.
3. Ա. «լետր»

Ե

1. Բ. «հողք»
2. Ա. «սպայիցն կենդինար»

Զ

1. Բ. «ունջ»

Է

1. Բ. «լեալ էր» այս ուղղագրութեամբ և ներքևում մի քանի անգամ.
2. Բ. «.դի.»

- 160
 165
 170
- 1. Լուծումն Ը հարցմանն. Հասանէին յաւուրս¹ .իե.:
 - 2. Լուծումն Թ հարցմանն. Լեալ էր վարազն .ՅԿ.¹ լիար²:
 - 3. Լուծումն Ժ հարցմանն. Լեալ էր լըքն¹ .ՄԽ.² լիար³:
 - 4. Լուծումն ԺԱ հարցմանն. Ունէր վաճառականն դահեկանս .ՍՅՀԶ.¹:
 - 5. Լուծումն ԺԲ հարցմանն. Լեալ էր նա[ա194b]ւակն¹ .իֆ. դրամ:
 - 6. Լուծումն ԺԳ հարցմանն. Լեալ էր խնձորն¹ .ՅԻ.:
 - 7. Լուծումն ԺԴ հարցմանն. էր գինին¹ փաս հարեր և քսան և վեց²:
 - 8. Լուծումն ԺԾ հարցմանն. Լեալ էր գինք ձիոյն¹ վեց հարեր և տասըն և վեց² դահեկան:
 - 9. Լուծումն ԺԶ հարցմանն. Հաւասարեաց գաղատոսն յաւուրս¹ .չ.:
 - 10. Լուծումն ԺԷ հարցմանն. [բ76a] էր հացն ի նաւին .իԳՆ. կայթ:
 - 11. Լուծումն ԺԸ հարցմանն. Լեալ էր ապաղարէն .ՏՄ.:
 - 12. Լուծումն ԺԹ հարցմանն. Լինի դահեկան .իՍ. Ե. [^]գ. [^]բ.¹:
 - 13. Լուծումն Ի հարցմանն. Եղև ընդ ամենայն երէն¹ .ՍձԿ.:
 - 14. Լուծումն ԻԱ հարցմանն. Լեալ էր ընդ ամենայն գերին¹ .ՍՄԻ.:
 - 15. Լուծումն ԻԲ հարցմանն.¹

Ը

- 1. Բ «աւուրս»
- Թ
- 1. Բ «.գձկ.»
- 2. Ը «լեար»
- Ժ
- 1. Ը «լոզն»
- 2. Բ «.բձխ.»
- 3. Ը «լեար»
- ԺԷ
- 1. Բ «.ուսյհզ.»
- ԺԲ
- 1. Ը «լեալ է նաակն»
- ԺԳ
- 1. Ը «լեալ է խնձորն»
- ԺԴ
- 1. Բ «գինին այն»
- 2. Բ «փաս .ձժզ.» ժ=ի
- ԺԵ
- 1. Բ «ձիուն»
- 2. Բ «.գձ. և .ժզ.»
- ԺԶ
- 1. Բ «յաւուրն»
- ԺԸ
- 1. Բ «լինի դահեկան .իա. օ. գ. ը.» Ը .իա. Ե. [^]գ. [^]բ. ի. վերջին չի հետևեալ քսան երորդ լուծման թուահամարն է, շփոթմամբ այս պատասխանի մէջ մտած. Ե կամ օ նշանը=՝/՝, գ=՝/՝, ը=՝ժ/՝
- Ի
- 1. Բ «երէսն»
- ԻԸ
- 1. Բ «գերին»
- ԻԲ
- 1. Ը նթերցողի գիւրութեան համար դնում եմ նախ խնդրի լուծումը (պատասխանը) սովորական թուանշաններով, ապա երկու ձեռագրերի ընթերցուածները:

Ա Ն Ա Ն Ի Ա Շ Ի Ր Ա Կ Ա Ց Ի

Գ.

ՅԱՂԱԳՍ ՀՐԶԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԿՆԻՑ վերտառութեամբ հասել է մեզ Անանիա Շիրակացու անունով մի փոքրիկ, ամփոփ գրութիւն, բաղկացած 12 գլխից: Անանիայի այս երկասիրութիւնը հրատարակելու ծառայել են ինձ երկու ձեռագիր, և ձեռագիրը մի ընտիր գրչութիւն է, բոլորգիր, զխակարգութիւնները կարմրագեղով, թուղթ, կաշեկազմ 16×20 հրմետր, միայր տողերով: Այս ձեռագիրը Գէորգեան Յուցակի № 295-ն է, «Տօնապատճառ հաւաքածոյ» մակագրութեամբ: Սկզբից թերի է, մինչև 109-դ թերթը մկներից կերուած, կամ ինչպէս Յուցակն ասում է «մկնակերեալ և ցեցակերեալ»: Բայց այս «մկնակերութիւնը» պատահել է ամենայն հաւանականութեամբ հայոց Ռէթ թուից յետոյ, երբ ձեռագիրը նորոգուել է և կազմուել, մինչդեռ մկներից կերուած մասը այժմ էլ մնում է առանց նորոգութեան: Նորոգութեան յիշատակարանը 2-ի գրուած վերջին երեսն է (478a): Եւ այդ յիշատակարանից մի քանի տող. «նորոգեցաւ սուրբ գիրքը» որ կոչի տաւնապատճառ... ձեռամբ փծուն գրչի նուաստ քահանայի, յիշատակ տէր Բարսեղ վարդապետին, վերադիտողի Համիթ մայրաքաղաքի, որ ստացաւ զսա ի հալալ արդեանց իւրոց յիշատակ հոգւոյ իւրոյ և հոգևոր ծնաւղին իւրոյ և ուսուցչին տէր Սրապիդն վարդապետին, որ եղև Վաթողիկոս և անուանեցաւ Գրիգոր, և մարմնաւոր ծնաւղացն, եղբարցն և քվերցն և ամենայն արեանառու մերձաւորացն, Եւ եդ յիշատակ ի դուռն Սուրբ Առաքելոցն, որք հանդիպիք... Վազմեցաւ տառս Ռէթ. թուին, ի հայրապետութեան տէր Մովսէս Վաթողիկոսին»:

2-ի մեզ հետաքրքրող ոչ-կրօնական մասը սկսում է 431a երեսից՝ «Գրիգորի Երուսաղէմացւոյ Սահմանք զանազանք. արտորոշեալք ըստ սրբոց և ծայրագոյն վարդապետաց. Յաղագս տարբերական և այլ և այլ անուանց» գրութեամբ, որի սկզբնաւորութիւնն է.

— Զինչ է Աստուած, Աստուած՝ վսեմական և ինքնաբուն գոյութիւն: Այս մեզ համար նոր՝ Գրիգոր Երուսաղէմացու գրուածքը՝ քաղուածքներ են Գաւիթ Անյաղթից և Նիւսացուց, կարօտ առանձին ուսումնասիրութեան. Այդ քաղուածքներին հետևում է եր. 451b, մեր հրատարակածը՝ Յաղագս Հրջագայութեան Երկնից, առանց Անանիայի անուան: Սրան անմիջապէս կից, եր. 454a, հետևում է «Անանիայի Յաղագս Երկնի» և յետոյ՝ «Պաւղոսի Աղեքսանդրացւոյ նախերգան ի ներքսածութեան և այլն»: Այս վերջին երկուսը տնս Պատկանեանի հրատարակութեան մէջ, Սրանց հետևում է գրչի մի ոտանաւորը * (եր. 474b) և ապա՝ 2-ի մեծ յիշատակարանը, Փոքր յիշատակութիւններ գրչի կամ

* Դնում ենք այդ ոտանաւորը, որ հետաքրքրական է լեզուի եւ մանաւանդ կազմութեան կողմից: Ի չափ երկոտասանիցն պարզեալ ոտից հոմերակամն արհեստի սուղ ինչ քան:

Գրութեան տառիս	ներցուցողի	զփաստս տաւնից
եղև նըպաստ	ոմն ի գըջաց	ի քնաւ անարգ.
Եկեալ յերկրէ	հեռաստանէ	ի գիւտ քանի
և պատահեալ	քաջն ուսուցչի	որում քաղծայր:
և ք իսկ և իսկ	ապա հարկի	յոմն եղբարէ,
այն ինչ յաւարտ	գրեթէ հասեալ	վարժից քանի, (Ա 475a)
բաբունական	անուանն ի ծահ	գու արժանի
սակըս սիրով	խովմանն յարէն	ըս տեառըն ցանֆ:
Գորովական	խանդի տառիս	այսմիկ քաղծայր,
լինել նըպաստ	և ծեռընտու	իւրըն փութն.
Պատանեկին	ապա մաղթել	ոչ հրաժարէ,
թէպէտ և շէք	նա քաւական	առ այն ինդիֆ:
Եւ ի հայելով	առ յոյժ նորայն	փափաք սիրոյ
և հրամանին	փորձի լըցաւ	գու ըստ կարի.
հազմապ հասեալ	ապա և այլ	իմըն հարկի,
յայտք փութոյ	վրիպէք պաշտել	զնա պարապով:

ստացողի կան շատ անգամ, ինչպէս օր. թ. 169, 198, 340, 398, 461, 470, և այլն. Գը- նումենք գլխաւոր յիշատակարանի կարևոր կէտերը՝ քաղուածարար (2-ի եր. 475b—477b):

Փառք. Որում յոգնատենչ ըղձիւք բաղձացեալ քաջ հռետորն և բանիրուն ճար- տարն, միջամուխ մակացուն (476b) աստուածայնոց տառից սրբազան քահանայն Գրի- գոր, սպասաւոր բանի, որոյ ներկրթեալ կամացն բարեսէր յաւժարութեամբ և ձեռնտու աւժանդակութեամբ հոգէշուք այեաւք ծաղկեալ սուրբ ծերունին աստուածապա- տուեալ արհի եպիսկոպոսն տէր Գրիգոր, որ ունէր զվերատեսչութիւն այցելական դիտման քահանայական դասու կատարողպետութեան Այրարատեան նահանգին, ներակայան ունելով զամուրն Բջնի, որ ի նուազեալ ժամանակիս առաքինասէր վա- րուք պայծառացեալ իբրև՝ զարեգակն փայլէ յաշխարհի, զոր տէր Յիսուս շնոր- հեսցէ զսա եկեղեցւոյ իւր ընդ երկայն ժամանակս խաղաղական կենօք. ընդ նմին և զհամապատիւ ինքեան ձեռասուն որդեակս իւր հոգւոր զտէր Աարդան հարազատ եղբարբ իւրով, նախայիշեցեալն Գրիգորիւ, որոց կամաւք և յաւժարութեամբ յանկ ելեալ կատարեցաւ Պատճառ—նամակս տանից, ի լրումն բաղձանացն Գրիգորի վար- դապետի, ի վայելումն անձինն կրթասիրի. և յետ աստեացս վճարման յիշատակ անջնջելի ինքեան և նախաժաման եղեալ ի Քրիստոս ծնողաց և եղբարց, ևս առաւել տեսան վանականի, վերյիշեցեալ աթոռոյս վերագիտողի, և ամենեցուն սոցա ի Քրիս- տոս սնուցողի. որոյ յիշատակն աւրհնութեամբ և աղաթքն ի վերայ սոցա և ամե- նայն աշխարհի, եւ եղև աւարտ գրչութեան սորա ի ձեռն տարաշխարհիկ պատանւոյ ումեմն թարմատար գրչի Գէորգայ ի Վիլիկեան նահանգէն, յանմտելի ամրոցէն Լամբրաւն կոչեցելոյ, որ է ի ստորոտ մեծի լերինն Տաւրոսի, որ ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարհեստ գրչութեան յանձնապաստան համարձակութեամբ ձեռնա- մուխ եղև ի գործ որ ի վեր էր քան զկար նորա, այլ ի յոլով ինամս վայելեալ նա- խայիշեցեալ արանցս փառաւորաց, և անիճահ վարկուցեալ զանց առնել զպատկառե- ցուցիչ հրամանաւ սոցին, զսարիսիս յուսոյն յաստուած ընկենլով ձեռն ի գործ ար- կեալ սատարութեամբ նժգեհակցի պանդրխտութեան իւրոյ և դաստիարակի անկատա- րութեան, Յովհաննու քահանայի, ի շրջագայութեան ամանակաց թուարբրութեան հայկականս աղին տաւմարի՝ յարաբարդեալ ամաց չորեքտասան յիսնեկաց՝ հանդերձ առաջին կատարեալ թու(476b)ով վեցեկեաւ ընդ տասնեկի շարամանելոյ, Ի բռնակա- լութեան կողմանցն արևելից բաժնին Ասիոյ ի վերայ յոլովից տիրեալ ազգաց խու- ժագուժ և բարբարոս ազգին նետողաց, ընդ որոց գրաւեալ ծառայութեամբ ծանրա-

Ճ և եւ խըրժիթն	ոչ պատահեալ	զստ պատշաճի,
եւս եւ գործիքն	որ արեստիս	այս ծնունտ տլ.
Նեղասորտեալ	յոլով անգամ	կըրթիւր յապուշ,
տի՛ նա յաւետ	ի զինչն առնել	տարակուսէր:
Ի վճագոյն	վեհին ինամոց	կարողացեալ
առ այս նըագ	գլխաւորել	զառեալս յաւանք,
Ներքողական	ձայնիւ ողորուատ	փառատրութեան
Իբր տրիտուր	վայելչապէս	ձաւնէ նըմլ:
Էթէ իցէ	հաճոյ կամ ոչ	տեսանողաց
Նա ի յիւրոյն	փութոյ չեղեւ	գըտեալ վըրէպ,
Գերազանցեալ	էր ինդրողին	տենչ բաղձամաց,
յորմէ տըւաւ	ըն յաղթեցաւ	Իբր ի վեհլ:
Բոպէական	իմըն մասամբ	զկամս ընծեռեալ,
Իբր զգլումայն	երկու զոր արկ	այրին աղքատ,
Եղեալ ստացաւ	տառիս առգրող	ըն մեծախոհ
եւ զգլխալանս	ըն ներելով	զերկս ընկալցի:
Արժանատր	լինել եւ ինքն	ի Քրիստոսէ,
զտանիւ ներեալ	եւ ողորմեալ	յաւըն վըրէր.
Յընծալ պարիւ	ընդ բազմելոցն	յառագաստին,
երրորդութեանն	երգել զգ փառս	միշտ ընդ նոսին:

գոյն լծոյ հարկապահանջութեան ևս առաւել տունս Հայոց, որպէս երբեմն Խորայէլ, ի ժամանակս անիշխանութեանն: Յորում ժամանակի վարէր զառաջնորդութիւն Սի- լիկիոյ Հեթում բարեպաշտ, որ էր և նա մտեալ ընդ վերասացեալս հարկաւ:

Այլ բռնադատէ զիս աստանաւր թախիժ սրտիս յողորմելիս յամել պատմու- թիւն. զի յանցելում ամի, ներգրութեան այսր մատենի, յաղագս ծովացեալ մեղաց մերոց Սուլտանն Մըսրայ բազմաձեռն զաւրու պատրաստութեամբ մահմետական սպայիւ, իբր ի ցասմանէ աստուծոյ ածեալ եմուտ յերկիրն Սիլիկիոյ, որում ոչ կարացեալ զգէմ ունել զաւրբն Հայոց՝ անդէն վաղվաղակի թիկունս դարձուցեալ, պարտեալ, յաղթեալ, լքեալ, վայրավասնեալ, ցրուեալ լինէին, ուրանաւր երկու որդիք թա- գաւորին ձերբակալ եղեալ՝ թշնամեացն ի բուռն անկանէին, կրսերոյն սրախողխող եղեալ, զերէցն գերի վարէին: Եւ ընդ ցրուել զաւրացն՝ զի և թագաւորն ևս ոչ ե- ղև պատահեալ յերկիրն՝ այնուհետեւ առանց կասկածի եղեալ բազում նախճիրս և ոճիրս արարեալ, հրգեհեալ զյոյովս ի քաղաքաց և զաւանս նոցին և տապալեալ զեկեղեցիս և զգիրս սուրբս հրոյ մատենալ, ընդ որս և զարքայանիստ քաղաքն Սիս գեղեցկաշէն ապարանաւք և մեծափառ եկեղեցեաւն սրբովն Սոփեաւ հրձիգ արարեալ. զբազումս ի սուր սուսերի մաշեալ և զևս բազումս գերի վարեալ հանդերձ հոլով ա- ւարաւ: Եւ մաւտ ի ընուլ ամին փոխեալ եղև յաշխարհէ կաթողիկոսն Հայոց տէր Վոստանդին, որոյ ողորմեսցի Քրիստոս: Այսոցիկ այսպէս եղելոյ՝ ինամքն աստուծոյ ժամանեսցէ ազգի և Աշխարհացն Հայոց՝ անդորր առնելով ի յոքնադիմի վշտաց սխալանաց գրչիս ներեցէք իբրու [4778] տկար բնութեան, վասն զի որպէս յառաջն ասացի, թէպէտ և ոչ ներհուն գոլով մեր յարհեստ գրչութեան, որպէս պահանջէ մեծագոյն այսր իրողութեանս վարկ՝ սակայն և ոչ կամակատար եղև մեզ դիպիլ տեղ- ւոյ և ժամանակի, այլ փոփոխելով տեղի ի տեղաօջէ . . . թէև մեք ևս ի բարուց ի բարս և ի խորհրդոց ի խորհուրդս լինեաք յեղափոխեալ, վասն որոյ և ոչ կարողա- նայաք ճահողակի հանդիպել ի գործ արուեստիս, որպէս և ի ստորակայէս յայտերևակ ցուցանի:

Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղև ի տիեզերահաշակ սուրբ ուխտն Վիրապին, որ էր ընդ իշխանութեամբ նախայիշեցեալ տեառն Գրիգորի, ուր սուրբ Լուսաւորիչն [․․․] ընթացասանամեայ երկարութիւն ժամանակին ի խորագոյն խաւա- րուտն արգելեալ բանտիլ ի մէջ չարաշունչ մահաբուրիչ գժնգակաթոյնն սողնոց, ու- րանաւր իբրու յարգանդի մաւր զմերն լինէր յղացեալ փրկութիւն, ուստի ելեալ ծագէր զլոյսն աստուածգիտութեան արեգակնաքատակ ծաւալմամբ յաշխարհս հա- յոց, ծնանելով վերստին ի Քրիստոս ըստ մարգարէութեանն զազգ մի ողջոյն, ուրա- նաւր և մեզ եղև ժամանակ ինչ դեգերել ի գուռն աստուածազարդ այնր տաճարի՝ սակս կրթութեան ի մեծ վարդապետէն և յաստուածազգեաց առնէն Վարդանայ, որ ընդ այն ժամանակս ի վերայ ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն [կա]տարի ա- ռաքինութիւն, և զուսուցապետութեանն ևս զգործ ի կիր արկեալ՝ ընդ առնելն լը- ծակցելով, ի գուռն սրբոյն Գրիգորի նստելով, զամենայն եկեայսն յաստուածայինն ուղղէր ճանապարհ, Եւ անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն Քուրդ և մեր զկնի նո- րա հետեւեալ ժամանակ [ինչ ար]արաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր և զառա- ջինն աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս: Եւ քանզի դէպ լինէր և անտի ևս փոխիլ նմա ի գործ բարւոք ուսուցչութեանն ի տեղի ուր տէր յաջողեսցէ՝ յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն տունս իւրեա[նց ի] մեծահոգակ հրեշտակա- կրան աստուածաբանակ սուրբ ուխտս Թեղինեաց, ուր և յանկ իսկ հանաք զառա- ջարկեալս, բարւոք ընկալեալ զմեզ բարեբարոյ և սրբասէր քահանայի Սարգսի սիրով և յաւժարամիտ կամաւք սպասաւորելով, զոր աղաչեմ յիշման բարւոյ արժանի առ- նել :

Այսպիսով ուրեմն մեր այս Ա ձեռագիրը գրուած է Հայոց .2Թ.2. թուին, = Փրկչական 1267-ին:



Բ ձեռագիրը Մայր-Յուզակի № 1089-ն է (=Վարինեանցի 1069), թուղթ, բոլորգիր, երկիջեան (=երկու սիւնակով), 27x18 հմետր, Երես 112b ստորին լուսանցքում ունի «Յիշեսջիք զգծող սորայ զԳէորգ երէցն, որ Թ տետր գրեաց ի գրոցս», Եր. 146b «... զստացող սորին զըրարունի վիշ Գէորգ... և ինձ մեղապարտ գծողիս ողորմեսցիս, անուանակցի սորին», Եր. 254a յիշուում է մի ոմն Պետրոս «Զմեղաւք մեռեալ ոգիս Պետրոս կեցոյ տէր ծնողաւք և ամ զարմիւք», Եր. 224a յիշուում են՝ Գէորգ, Պետրոս Կերսես և Մովսէս, Ուրիշ յիշատակարան ինձ չհանդիպեցաւ, ուստի և գրութեան ժամանակը մնում է անորոշ, Անշուշտ շատ աւելի նոր է ժամանակով, քան Ա-ը, Այս 2-ի առաջին մեծ մասը Մովսէսի հինգ գրոց մեկնութիւնն է (Վարդան վարդապետի), նաև ուրիշ մեկնութիւններ, Եղիշէի, Եփրեմի Լէն, Տփի երկրորդ մասը, բոլորովին անշատ (երեք թերթ բաց՝ չգրուած թուղթ) առաջին մասից, սկսուում է մեր ներքեի հրատարակութեամբ, յակնէ—յանուանէ գրելով կարմրագեղով «Յաղագս շրջապայութեան երկնից, թէ որպէս իմաստասիրացն թվեցաւ. Անանիայի Շիրակացոյ ասացեալ», Կարմրագեղով վերնագրերը բացի առաջին գլխից, ամենուրեք բաց են թողուած. այդ պակասները, որ լրացնում ենք միւս ձեռագրից՝ գրուած են գծիկների մէջ (||), «Երկնից Շրջապայութեանը» հետևում է, ինչպէս և Ա ձեռագրում կարմրագեղի համար բաց թողուած վերնագրերով, «Անանիայի Յաղագս Երկնի», յետոյ անընդմիջապէս «Պաւղոսի Աղեքսանդրացոյ» վերևն յիշուած գրութիւնը, Այս վերջին գրութիւնը, և՛ Ա և՛ Բ ձեռագրերում, սպուածից աւելի բաւական մեծ մի յաւելուած ունի վերջում, Անանիայի քաղուածունների ձևով և բառերով, Այդ յաւելուածին վերադառնալու մենք առիթ կունենանք.

Բացի այս յիշուածներից Բ-ն ունի և «Գաւթայ հայոց փիլիսոփայի, և Փիլիկա հռոմեցոց վարդապետի, և Հոմորեայ արուեստաւորի և Մովսիսի Գերթողի՝ ինդիր փափազման մասանց սիրոյ» անմիտ գրութիւնը, ուրիշ տոմարական գրուածներ, «Խորենացու աշխարհագրութիւնը, առանց հեղինակի անուան (Խորենացու անունը աւելացրած է բոլորովին նորագոյն շղագրով) և Գուին քաղաքի «մղոնաչափութիւնը», որին նոյնպէս կվերադառնանք Անանիայի վերագրուած երկերի այս հրատարակութեանց մէջ.

* *

Ա և Բ ձեռագրի բաղդատութիւնից երևում է, որ բոլոր առաւելութիւնները Ա-ի կողմն են. Բ-ը մի սխալաշատ, տգէտ և աղաւաղ գրչութիւն է, բայց հազիւ թէ անընդմիջապէս Ա-ից ծագած. Այդչափ աղճատումների համար (տես հրատարակութեանս ընթերցուածները) անհրաժեշտ է ենթադրել մի շարք տգէտ ընդորինակողների գործակցութիւնը, Մի քանի հետաքրքրական ընթերցուածներից ամենից աւելի ուշագրութեան արժանին է Բ 2-ի Ա գլխի 17 ընթերցուածը, որից տեսնուում է, թէ ինչպէս Ա-ի (կամ Ա-ի խմբից մի այլ ձեռագրի) լուսանցքագրութիւնը՝ Բ-ում մտել է բնագրի մէջ («կամար, կաղապար, կապար»), Թէև միայն Բ-ն ունի պահած Անանիայի յիշատակութիւնը, այսուամենայնիւ, մեզ թւում է թէ դժուար է կասկածի ենթարկել այս գրութեան Շիրակացուն պատկանելը, Յամենայն դեպս այդպիսի կասկած յարուցանելու համար հարկաւոր են դրական փաստեր, Մեր նպատակն է Անանիայի, կամ նրան վերագրուած, ինձ ծանօթ, բոլոր անտիպ գրուածները տալ ամենայն հաւատարմութեամբ ընթերցուածների, ձեռագրերի խմբերի Լէն, միով բանիւ ամենայն խղճմտութեամբ և մեր տպարանի յայտնի միջոցներով, Եթէ երբեմն կարգարանան և իմ աւելացրած գիտողութիւնները, մերձեցումները, բաղդատութիւնները, այդ հօ աւելի լաւ.

* *

Անանիայի այս գրութիւնը ինձ յայտնի է միայն ԱԲ ձեռագրերից, * տպագրուած

* Վենետիկ Մտիթարեանների գրատան ինձ յայտնի մի համառօտ գրչագիր ցուցակից երևում է, որ այնտեղ Անանիայի այս գրուածքից, առանց հեղինակի անունան, ունին 4 օրինակ: Այդ ցուցակում նշանակուած է նաեւ մի օրինակ վերեւն յիշուած Գրիգոր Նրուսաղէմացու գրութիւնից: Հաւանականաբար այդ այնպիսի մի ձեռագրում է, որի տփի կազմութիւնը նման է մեր Ա-ին:

աղբիւրներ ինձ յայտնի չեն, թէև այդ չէ ապացուցանում, որ այդպիսիները չկան։ Ա՛յս միայն որոշ է, որ Զարբանակեանը այս գրուածքի յիշատակութիւնը չունի (Հին. Գպր.), նմանապէս և Պատկանեանը, Սակայն միւս կողմից Հայկազեան Բառգրքի հեղինակները՝ անկասկած՝ ծանօթ են եղել այս գրութեանը և բառեր ունին քաղած նրանից, տես օրինակի համար թանձրեմ, սեղմապէս, սիք, յարգող բառերի համար բերուած հետեւեալ վկայութիւնները, առնուած «Ռսկիփորիկներէց»։

—«Հարաւային օգն թանձրէ դամպս (զմիմեամբք դիզանելով), (Մեր հրատ. տ. 65)։

—«Զիւնն (?) յորժամ սաստկապէս թափի ի վայր՝ տաղտարափ կոչի, և մինչ սեղմապէս՝ ձիւն կոչի»։ (Մեր հր. տ. 72)։

—«Ծրտալից սիք. սիք ի խոնաւուտ տեղեաց՝ երկրային»։ (Մեր հր. տ. 84)։

—«Յաղագս փոթորիկ հողմոյ, զոր ի բաջաղանս և յառասպելս վիշապ հանել ասեն»։ (Մեր հր. տ. 92)։

—«Եւ որ յարգողն կոչեն»։ (Մեր հր. տ. 104)։

Թէև կան և ուրիշ շատ բառեր այս գրուածքում, որ Հյկ. Բ-ը չեն մտել, ինչպէս օրինակ, ալլախառն, շարժկոծել, ընդգէմդարձ, ցրտալից, զինուորապէս ևն։

* * *

Գանք ուրիշ դիտողութեանց, 2^է ունեցել արդեօք Շիրակացին իւր այս գրութեան համար աղբիւրներ, և այն հայ աղբիւրներ, ինչպէս իւր միւս երկերում, Բարսեղ, Փիլոն իւր սովորական աղբիւրներն են, որոնցից քաղում է լիարուն, Ահա՛ մի քանի քաղատուութիւններ գրանցից։

Բարսեղ, Վեցօր. Գ. եր. 75
Վննտ. 1850:

Յաղագս Շրջագայութեան Երկնից.

«Շորուն ծովու խորքք եւ զոգք են...
եթէ ծովն հիւսիսոյ, եթէ հարաւոյ, ե-
թէ ծովն արեւելից եւ ծովն արեւմտից...»

Եւ զծովն մեծ զայն շուրջ պատեալ
զաշխարհոյս ասացին. և ի բազում տե-
ղիս և կողմանս՝ յարեւելս եւ յարեւմուտս,
ի հիւսիսի եւ ի հարաւ եւ ի զոգս եւ խորշս
դիմեալ ծովացեալ .. (տ. 35—38)։

Փ Ի Լ Ո Ն *

Յաղ. Շրջ. Երկնից.

«Երկնի յաւէտ շուրջ հիւ գալով. (Ժ.
Եան.)—ինքն անշարժ եւ անյեղյեղով
եկաց մնաց միշտ».

Ահա և նա յաւետախաղաց և անդա-
դար ունի զհիւ գալն զյաւեժաւն, որով
և նա շարժուն է յաւէտ. (տ. 138—9)։
—Հարկ է անշարժ զու այնմիկ, որ շար-
ժէն զնա. անյեղյեղով և անփոփոխ և
անշարժ զաւրութիւն է նորա. (տ. 141—
2)։—Եւ եթէ անյեղյեղ և առանց փլա-
սու և կիրս ինչ կրելոյ է զաւրութիւնն
այն .. (տ. 143—7)։

Անանիայի այս գրուածքում հաւանականաբար կան փոխառութիւններ և Ասկղեպիա-
գէսի անունով մեզ հասած հատուկտորներից, որոնց ծանօթ լինելով միմիայն Զարբանա-
կեանից՝ անհնարին է ինձ բաղդատութիւններ անել (տես. Թարգմ. նախ. 316—317)։

Բայց այս բոլոր աղբիւրները երկրորդական և աննշան են՝ համեմատած սոյն գրու-
թեան գլխաւոր և բուն աղբիւրի հետ, որի վրայ է ձևուած Անանիայի այս ամբողջ գրու-

* Փիլոնի վերջին հրատարակութիւնը չունենալով ձեռքի տակ, այս վկայութիւնները բերում ենք Հայկ. ԲՈ.—ից։ Այս փոքրիկ հատուածներից արդէն պարզ երեւում է նմանութիւնը. մեծ հատուածների բաղդատութեամբ փոխառութիւնն անշուշտ աւելի ակնհայտ է դառնալու։

Թիւնը: Այդ գլխաւոր և մեծ աղբիւրն է «Արիստոտելի» Յաղագս Աշխարհի յայտնի գրուածքը (Վենետ. 1833): Այգտեղից են առնուած Շիրակացու և գաղափարները և գրութեան ծրագիրը և բացատրութիւնները, տեղ տեղ մինչև անգամ՝ բառացի: Շիրակացին համառօտում է «Արիստոտելի» այդ գրութիւնը, բաց թողնելով յունարէն դժուարիմաց բառերը—տերմինները, աշխատում է աւելի հայերէն և մատչելի լեզուով պատմել, տեղ-տեղ նաև ի վնաս գիտական ճշտութեան: Եթէ իսկապէս այս մեր հրատարակածը պատկանում է Շիրակացու գրչին,—իսկ այդ երևում է ձեռագրերի վկայութիւնից որ այս գրութիւնը գնում են Շիրակացու երկերի շարքում, գրուածքի նիւթից և մանաւանդ լեզուից, որ ամբողջ բացատրութիւններ և դարձուածներ ունի Շիրակացու միւս աշխատութիւններից*—այն ժամանակ անհրաժեշտ է դառնում ընդունել, որ Գաւիթ Անյաղթին վերագրուած՝ Արիստոտելի Յաղագս Աշխարհի գրութեան հայ թագմանութիւնը կանուխ է Շիրակացուց, որն և ընդարձակ չափերով օգտուում այդ հայ թարգմանութիւնից, ինչպէս կապացուցանեն ներքևի բաղդատութիւնները, Ուրեմն և վերջերս հայագէտների մէջ երեցած ձգտումը՝ «Գաւիթ Անյաղթի» մի քանի թարգմանութեանց թուականը իջեցնել մինչև ութերորդ դար, և դեռ աւելի էլ ուշ, կորցնում է իւր հիմքը:

Արիստոտ. Յաղագս. Աշխարհի

Անանիա Յաղ. Շրջ. Երկնից.

«Քանզի երկու ոմանք գոլորշիք ի սմանէ վերաքերեալ լինին շարունակապէս. գեր ի վերոյ մեր օդն անօսրագոյն է եւ ամենեւին անտես, եթէ ոչ ի սաստկութենէ ումեֆնէ երևեալ լիցի. իսկ այն որ ի ջրոց եւ ի գետոց վերաքերեալ լինի, ընդ տեսութեամբ ստորանկանի: Դ սոցունց մինն չոր է եւ ծխատեսակ յերկրէ ի վեր հոսեալ, իսկ միւսն խոնասագոյն ի գէճ ընութենէն ի վեր ծխեալ: Եւ ի սմանէ լեալ լինին մառախուղք եւ սառնամանեաց տեսակք եւ ամպք իսկ, եւ ծիւնաքերք եւ կարկուտք: Իսկ ի չորոցն հողմոնք եւ հնչմոնք զանազանք, որոտմոնք եւ փայլատակմոնք. կիզմոնք և ամ պահարութիւնք, եւ այլ որ ինչ ընակակից է սոցունց» (եր. 610):

«Եւ է ինչ որ դարձեալ իւրաքանչիւր երկիրս** գոլորշեաց, յորոց գործի վրնասք և աւզուտք: Եւ երկու շոգիք փղծկալիցք յաճախ և ստեպ յերկրէ աստի յաղս ելաննն նրքապէս անտեսանելի աչաց, որ թուի թէ յարեւլս յաճախ լինի: Եւ են դարձեալ որ ի գետոց եւ յաղքերաց լինին: Երևին ինչ այսպէս նմանութեամբ՝ զի մին է ցամաք ծխալից, եւ է նա ի հողմոց անտի, եւ միւսն խոնաւ է թանձրամած՝ ի զիծականութենէն զփղծուկն տալով և առնլով. եւ ի նմանէ լինին բալք եւ տեսիլք սառնամանեաց, ամպք եւ անձրեւք եւ ծիւնաքերք եւ կարկուտք: Բայց ի շոգոյ անտի՝ հողմք ազգի ազգի, որոտմոնք եւ փայլատակմոնք, կայծակն եւ հուր եւ որ ինչ նման է սոցին: (տ. 41—50):

Այսպէս կարելի էր ամբողջ գրուածքը, ծ ա յ բ է ծ ա յ բ, բաղդատել, բայց խուսափելով երկարութիւնից, այդ թողնում ենք այս խնդրով առանձինն հետաքրքրուող մասնագէտներին. (Համեմատիր Արիստոտել եր. 605=Յղ. Շրջ. Երկ. գլուխ Ա., եր. 610=գլ. Ա. և Բ., եր. 611=գլ. Է., եր. 612=գլ. Է. Ը, Գ, եր. 613=Գ, Թ, եր. 614=Թ, եր. 615=ԹԱ, եր. 621=ԹԲ ԼԷն):

* * *

Իւր կողմից Անանիան իբրև աղբիւր է ծառայել իրենից յետոյ եկող բոլոր տոմարագէտներին: Այս բանին վկայութիւններ բերելը մեզ շատ հեռուն կտանէր:

* Հուր թաղկեալ, եւ նման բացատրութիւններ: Բ ծեռագիծը, ինչպէս տեսանք, ունի նաեւ Շիրակացու անունը իբրև հեղինակի:

** Արդեօք չէ՞ աղմատուած:

Բաւական է այսչափն ասել, որ ինչ նշանակութիւն որ ունեցել է Խորենացու պատմութիւնը հետագայ պատմիչների համար, նոյնն է եղել Շիրակացին (իւր գրուածքների ամբողջութեամբ) հետագայ տոմարագէտների համար, Այս վերջինների ուսումնասիրութիւնը՝ առանց նախապէս Շիրակացու հետ լաւ ծանօթանալու՝ հաստատուն հիմքի վրայ չէ կարող գրուած լինել, Սարկաւազը, Վանականը, Կոզեան, Սամուէլ և ուրիշ մանր ու խոշոր տոմարագէտներ շատ անգամ լոկ ընդօրինակողներ են Շիրակացու, Շատ մօտ յարնչութիւն պիտի ունենայ այս մեր հրատարակածի հետ Սարկաւազի «Բնախօսութիւն վասն շարժման կամ սասանութեան երկրի» գրուածքը, որ գծադրաբար չունինք ձեռքի տակ, ուստի և բաւականանանք մի բազդատութեամբ, առնուած Հայկ. Բառ. վկայութիւններից:

Սարկաւազ, Բն. վասն Շարժ.

Յղ. Շրջ. Երկնից.

«Ղասն ի գեղջկաց տգիտաց վիշապին անուանելոյ: Ոչ եթէ վիշապ է փոշին մանուածոյ ի փոթորկէ գեանականէ յօդս խաղացելոյ, այլ հողմ ինչ է պտուտ կեալ: Առասպելական ստութեանն ունին զնել և հաւատալ մի՛ երբէք յանձն առնուցուս վիշապ զնա անուանողաց:

Յաղագս փոթորիկ հողմոյ, զոր ի բաջաղանս և յառասպելս վիշապ հանել ասեն: Փոթորիկն հողմ է, որ յերկրէ ի վեր ելանէ... և այս է զոր վիշապ հանել ասեն (տ. 92—99):

Չանց առնելով միւս տոմարագէտներից բերուած այսպիսի նման, փոխառնուած, հատուածների երկար շարքը, բաւականանանք զնելով վերջին նշանաւոր տոմարագէտներից մէկի՝ Յակոբ Արիմեցու, մի ամբողջ հատուածը, որ, կարելի է ասել, Յաղագս Շրջագայութեան Երկնից երկասիրութեան մի նոր խմբադրութիւնն է, հետաքրքրական լեզուով և բովանդակութեամբ: *

«Աստուծոյ սքանչելի արուեստն զմին բնութիւն իրացն ի բազումս բաժանէ, և բազում անուանք կոչին, զի ի չ տարերց մինն քամին է, որում օդ ասի, Եւ այս մինս ցեղուցեղ անուանք [91b] ունի, զի ասի հողմ, քամի, օդ, և աստի լինի՝ ամպն, ձիւնն, եղեմն, աղեղն որ իջանէ, որոտն, շանթիքն, ցոլմուկքն, փայլակն, և այլ բազում իրս: Թէ ՈՒՍՏԻ՞ ԼԻՆԻ ԱՅՍՈՒՔԻՎ ՅՕԿՆ ԵՒ ՈՐՊԷՍ, Երկու գոլորշիք որ ելանեն յերկրէս ի վեր, որ ասին բուխար, և ի վեր բարձրանան նօսր և անտես աչաց: Մինն գէջ է և միւսն չոր, այն որ գէջն է յաղբիւրաց, ի գետոց և ի ջրոց ելանէ, և այն որ ցամաքն է՝ ի չոր և ի ցամաք գոլորշեացն լինի և ի հողմոց, և որպէս զծուխ վերանայ, Այն [որ] գէջն է՝ անտի լինի բալն, սառնամանիքն, ամպն, անձրևք, ձիւնք, կարկուտք, և այն որ չոր շղթին է, որ է բուխարն յաշխարհէս, անտի լինի ազգի ազգի հողմք, որոտմուկք, փայլատակմուկք, կայծակն, հրձգութիւն, և այլ որ ինչ սոցին նման է, ՎԱՍՆ ԲԱԼՈՅՆ: Բալն ի զօրութենէ ամպոցն է, զի յորժամ օդն թանձրանայ՝ ի բալ դառնայ, և է բալն քան զօդն թանձր, և քան զամպըն նօսր, և ունի սակաւ մի գիջութիւն, որ խոնաւեցուցանէ զերեսս երկրի, զոր կոչեմք մարախուղ, ՎԱՍՆ ՈՐՈՏՄԱՆ ԵՒ ԿԱՅԾԱՎԱՆՑ, Յորժամ հողմն բռնութեամբ հնչէ և ի մէջ ամպոցն մտանէ, յայնժամ զթանձր ամպն պատառէ և լինի ճայթմուկք ի պատառմանէն, զոր և որոտ անուանեմք, և ի հողմոյն յիրար շփելոյն և ի ճնշելոյն հուր փայլէ, զայն փայլատակմուկք ասեն և կայծտալ, զի հուրն յամենայն արարածս խառն է, և աւելի յօդք, Եւ երբ հատանի հուրն յամպոյն, թէ թանձր ելանէ՝ յերկիր անկանի և վնաս առնէ, և թէ նօսր ելանէ՝ ոչ թողուն օդքն [92a] յերկիր, այլ ընդ օդն ցնդի անվնաս, Թէ Է՛Ր ՉՄԵՌՆ ԶԻ ՈՐՈՏԱԼ, Վասն զի ձմե-

* Մեկնութիւն Յումարի, զոր ենդրեաց Թովմա, վարդապետն Մեծոփայ վանաց՝ աստուածասուրբ ուխտին: Եւ սիրով զնայցուածն նորս կատարեալ Յակոբ վարդապետի Ղերիմցոյ, Ձ. № 2048, 13 Մայր Յուցակի:

առն ամսն նօսրցել է, զի ձմեռն հիւսիսային հողմ հնչէ և այն նօսրցնէ զամսն, Եւ թէ յի՛նչ պէտք է որոտալն. վասն զի թանձրութիւն ամպոցն և ի բռնութենէ հողմոցն չկարէ անձրեւն յամպոց ի վայր հօսիլ, Իսկ ի գոռալն և ի պատառիլն թուլանայ հաւասար և արկանէ զանձրեւ. և զոր օրինակ մայր զմանուկն ծնանի և մեծածայն գռայ, և վասն այն գռայ, զի զհողին յինքն քարչէ, որ զչնչական երակքն նեղէ, և զմանուկն ի վայր բերէ և ծնանի, նոյնպէս և երկիր սառուցեալ և պողեալ է ի ձմեռնային ժամանակն և պնդեալ զբնութիւն հողոյն, վասն այսորիկ պիտոյ է ձայն որոտալոյն, զի թուլացի բնութիւն հողոյն, և բոյսք և սերմանիք յերկրէ ի վեր ծընանիցին և ծառք ծաղիկս փթթեցեն. և ամենեքեան ի ձմեռնային կապանացն ի բաց արձակին, ՅԱՂԱԳՍ 211-ՆԻ ԵՒ ԱԶԲԵՒԻ, Յորժամ արեգակն ի հարաւային կողմն ցածանայ ի խոնարհ, յայնժամ հիւսիսային հողմն զօրանայ, և զօրն յիրուր խառնէ և թանձրացնէ, որ ամպ լինի և կտրատի և ի վայր հօսի սպիտակ և փրփրատեսակ, զի ցուրտ քամին զնօսրութիւն ջրոյն այսպէս առնէ, Երբ թանձր և մեծ թափի ի վայր այնոր տաղտարափ ասեն, և որ նօսր է և մանր՝ այն ձիւն կոչի, Իսկ ի գարնան ժամանակի և ամառն և աշունն օրն ժողովէ զջուրն ի ծովէ և ի գետոց և առեալ յերկրէ ի վեր բարձրանայ, և ի քաջ ամպոց թօթափմանէ լինի անձրեւ, զի ի գարնան ժամանակն օրն պարարտանայ ի գիջութենէ [92b] ջրոյն և յարեգականն ջերմութենէն թանձրանայ և խոնարհի ի ծովն, և առեալ բարձրանայ, զի հողմ ի ներքոյ անցեալ առեալ տանին և հողմոյն գոռալովն և որոտալովն օրն պատառի և թուլանայ և զանձրեւ ի վայր հօսէ, ՅԱՂԱԳՍ ԿԱՐԿՏԻՆ, Կարկուտ լինի ի սաստիկ և ի ցուրտ քամոյն, որ շնչէ ի հիւսիսոյ կողմանէ, և ի սաստիկ փչմանէ հողմոյն ուրբելով բոլորէ և պնդէ զնօսրութիւն ջրոյն և շաչելով յերկիր թափէ, է որ ուժով և խիստ և է որ նուազ. և այս լինի ի խրատ և ի պատուհաս մեղուցելոցս, Թէ ՈՒՍՏԻ՝ ԼԻՆԻ 80ՂՆ, ԵՒ ԵՂԵԱՄՆ, Լուսաւորքո օդով զջուրն ծծեն և ի վեր քարչեն, երբ արեգակն ծագէ թուլացնէ զօրն՝ և այն՝ զոր մնացեալ է յօրն ի գետին իջանէ և ցօղ կոչի այս, Իսկ ի ցուրտ ժամն թերասառոյց լինի և կոչի եղեամն, Թէ ԶԻ՞ՆՁ Է ԱՂԵՂՆ, ՈՐ ԻԶԱՆԷ, ԵՒ ԱՍԻ ՏԷՐՈՒՆԻ ԳՕՏԵԱԿ, Պատճառն աղեղն իջանելոյն գիջութիւն օդոյն և ջերմութիւն արեգականն է, զի ի փարատել անձրեւին՝ գիջութիւն որ յօրն է մնացեալ և արեգականն ջերմութիւն յիրար խառնին, Օդոյն գիջութիւն ի ներքուստ և արեգականն նշոյլքն ի վերուստ միարանին և ի նօսրութիւն օդոյն գոյնագոյն և երկնեային երևի կամարաձև, որպէս զերկնային զգունդն, Զի գոյն երկրիս և կանանչագեղ բուսոցն և ջրոյ և հրոյ յիրար խառնին և այնպէս երևին, Թէ մէկ մի է գօտին՝ որ երևի, նշան դադարելոյ անձրին է և պարզելոյ, և թէ՛ երկու երևի, այլ և այլ գիհ, զյորդ և զսաստիկ անձրեւ նշանակէ, Եւ ի սկզբանէ աշխարհի էր սա, զի հետևանք է տարերցս, որպէս ծուխն հետերթանք է հրոյ, որ քամի գէջ խոնաւութիւն ի հրային կրակոյն [93a] և ապա յստակի բոց հրոյն, վասն այսորիկ զսա ետ աստուած նշանս ի յորդութեան անձրեւացն դադարման, Թէ ԶԻ՞ՆՁ Է ԼՈՒՐՆ, ՈՐ ՅԵԿՆԻՑ ԱՆԿԱՆԻ, ԵՒ ՔԱՆԻ՞ ԱԶԳԲ ԵՆ ՍՈՔԱ, Է ազգ մի, որ շանթիք ասեն, որ ի հրեղէն երկնիցն կտրատի և ի վայր հօսի և չղաղարի ուրեք, այլ յորժամ անկանի, ծակէ զթանձրութիւն երկրի և զոր ինչ գտանէ՝ այրէ և ընդ թափն ի վայր անցանէ ի ներքի կիսագունդն յիւր ազգակիցն, ուստի անկեալ է, Եւ է ազգ մի՝ յորժամ ի սաստիկ ամպոցն հողմով ծովն խառնակի, որ ատակ ծովուն և աւազն յերեսն շրջի և օրն առնու զաւազախառն ջուրն և ի վեր վերացնէ ջրովն և տանի ի բարձր ի հըրախառն և ի տաք օրն շփէ և վառէ որպէս զհուր և ի վայր թափէ, և յորժամ յերկիր հասանի՝ յոր ինչ դիպի՝ այրէ և անցանի, և մնայ որպէս երկաթի քափշայ, Եւ է ազգ մի, որ ասեն թէ աստղ թռաւ. և աստղն չի թռչիլ, այլ յորժամ ընդ շրջաքայ պարունակս երկնից հնչէ և սաստիկ արագապէս անցանէ, ընդ որ գնայ՝ զօղըն, որ տաք է և հրախառն, որպէս ձոր պատառէ, և երկայնութեամբ երևի, և թուի թէ՛ աստղ թռաւ, Եւ է ազգ մի, որ ի պատառել օդոյդ ի սաստիկ հողմոյն՝

վերին լոյսն հրակերպ երևի և օգն որ պատառեցաւ՝ յիրուր գալն և ի կցիլն ծածկի դարձեալ, և մեք զայսոսիկ ասե՛ք թէ աստղ թռաւ: Նոյնպէս է և այն, որ կայծկտալ ասեն, զի յորժամ ամպն պատառի՝ ի գոռալոյն որոտն լինի, Եւ յիրուր շփելոյն կայծակն լինի, զի որպէս հրահան երկաթն որ զկայծքարն բախէ՝ ելնէ ձայն և ելնէ հուր, նոյնպէս երբ հողմն զամպն պատառէ՝ ի պատառելն [93b] զորոտն առնէ և հողմն յամպոյն հուր հանէ, և ի տեղի ուր անկանի՝ վնասէ: Յառաջ որոտն է և ապա կայծակն, բայց մեք յառաջ զհրոյն լոյսն տեսանեմք և ապա զորոտն լսեմք, զի աչքն այլ սուր է քան զականջն, և ակն զհեռուն տեսանէ և ականջն զմօտն լսէ: Վասնայնորիկ զլոյսն ի հեռուստ տեսանեմք և յորժամ ձայնն ի վայր հասանի և մօտի մեզ՝ ապա ականջն լսէ: Եւ այս յորժամ ի պարզ ժամն ելանէ՝ թռուցած աստղ ասեմք: ՎԱՍՆ ԼՈՒՍՆՈՅՆ ԲԱԿԱՌՈՒԹԵԱՆՆԻ: Թանձր օդդ, որ ունի բոլոր զճառագայթ լուսնին և նշոյլքն ի գուրս ելեալ ընդ թանձր օգն՝ բոլորակ լինի, և է նշանակ ամպոց» (2. 2048, 15 եր. 91a—93b):

* * *

Այս թեթեւ գիտողութիւններից երևում է նորից այն ակներև ճշմարտութիւնը, որ մեր գիտական մատենագրութիւնը, ամբողջապէս փոխ առնուած քրիստոնեայ Արևմուտքից (գլխաւորապէս Բիւզանդիոն), շարունակում է մշակուել, կամ աւելի ճիշտ՝ պահպանուել և ընդօրինակուել զանազան հաւաքագրող—կոմպիլատորների, մեկնիչների, դասատու—վարդապետների ձեռքով, հետզհետէ նսեմանալով ճիշտ այն չափով, որ չափով որ լուսաւոր Արևմուտքի հետ յարաբերութիւնները գծուարանում են: Մեր ագիտագոյն դարերը համապատասխանում են ճիշտ այն խաւար շրջաններին, երբ այդ յարաբերութիւնները կատարելապէս ընդհատուում են: Եւ մեր վերածնունդը սկսում է այդ գիտական յարաբերութիւնների վերսկսելովը: Արևմուտքից պէտք է սպասենք ամեն բարիք, ինչպէս որ Արևմուտքից ստացանք քրիստոնէութիւն, գիր, մատենագրութիւն, գիտութիւն, ազգային գիտակցութիւն, մարդավայել աշխարհահայեցողութիւն, ճշմարիտ է, որ մեր մեկուսացած, բարբարոսների մէջ կղզիացած դիրքում, քրիստոնէութեան սահմանածայրում, Արևմուտքի սէրը նստեց և մինչև այսօր էլ մեզ շատ թանկ է նստում, բայց մեր պատմութեան, մեր ամբողջ գոյութեան ներքին իմաստը այդ մաքառման մէջն է, երբ զոհուում է անասնականը, մարմնաւորը, հոգեկանի և գաղափարականի համար:

29 Յունիսի.

Գալուստ Տ. Մկրտչեան



Մ. ՅԱՆԱԿՍ ՇՐՋԱԿԱՅԻՆ ԵՐԿՆԻՑ՝ ԹԷ ՈՐԳԵՍ 1 ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑՆ
ԹՈՒԵՑԱԻ. 2 || ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿԱՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ. || 5

Գործք աստուծոյ մեծամեծ են ⁴ ասէ յարայէլի թագաւորն Դաւիթ,
 և զամենայն ինչ իմաստութեամբ արարեալ պատմէ աստուածային ստա-
 5 ցուածոցս զոյս. ⁵ զի են՝ որք ի տեսութեան աչաց են, և են՝ որք յիմանա-
 լեաց քննութեան: ⁶ Արդ վերին զայն երկին, զոր յոյնք եթերն ⁷ կոչեն և
 քաղդէացիքն հուր թաղկեալ, որ կոչի հրատ բոցեղէն. զի է հուր՝ որ ա-
 ուանց նիւթոյ ⁸ է, պարզ ըստ այլախառն ⁹ շարադրական մասինն, զի չէ յու-
 մեքէ, այլ յոչընչէ. [Ա 452a] և ոչ որ ի նմանէ յեղեղոցս, և ոչ որ ի վեր
 10 քան զնա, այլ ինքն յինքեան ¹⁰ առանձնացեալ՝ անհատանելի էութեամբ, ¹¹
 պարզ միութեամբ, տարածեալ զաւրէն վերնայարկի ձեղուան, ¹² անթիւրե-
 լի շրջափակութեամբ, բոլորաձև հարթութեամբ զերկրովս զնդանման, ¹³
 անդադար և անյաղթելի շրջազայտութեամբ երազապէս, անտեսանելի նիւ-
 թականութեամբ, իմանալի և եթ, որ յերկու կիսազունդս բովանդակի՝ ներ-
 15 քին և վերին՝ ըստ երկրիս զրի հանդէպ միմեանց:

Եւ ի ներքս փակեալ ունի զմեծս զայս զաշխարհ և զսաստկութիւն
 հողմոց ¹⁴—զի յանկութիւն ¹⁵ է հրոյ և հողմոյ առ միմեանս—զի նորա ¹⁶
 շրջապատութեամբն իբրև կամար ¹⁷ իմն ձևանայ և աւղոցն անաւսրու-
 թեամբն ¹⁸ իբրև յաման ինչ ըմբռնեալ՝ որպէս ջուր ի խեցեղէն ինչ կամ
 20 ի նիւթեղէն աման ըմբռնեալ՝ պահի լուծութեամբ:

Այսպէս և հողմք ի սփիւռ ¹⁹ տարածմանէ ձևացեալ եղեն վերին երկնի
 շրջափակութեամբ: Բայց ունի նա զերկիր շրջափակութեամբ և զջուր ի
 ներքոյ փակեալ, որք ծովք անուանին. որպէս զթաղկութիւն բալոյ նորա
 ծին է, այլ սա ծննդական ջրոյ, ²⁰ որ լինի ի ճնշմանէ հողմոց: Զի [ի] շարժ-
 25 կոծելն՝ կամ յորդորիւն կամ մեղմ՝ նա ըստ իրաց յուզմանն, որպէս ի
 կենդանուջն, թէ առաւելու հրայինն՝ նուազեցուցանէ զխոնաւայինն, և խո-
 նաւումն բազմացեալ՝ զհրայինն պակասեցուցանէ: Ընդ նմին աւրն՝ որ է
 շունչն՝ ի բաց բառնայ զջերմութիւնն, ²¹ վճարի ի կենդանութենէ մահուամբ:
 Զի պիտոյ են զոյգխառնութիւնք ²² չորիցս այս, զոր աստուած խառնեաց ի
 50 միասին:

Ա

1 Ա «որպէս» 2 Բ «թվեցաւ» 3 Ա չիք 4 Բ «մեծամեծք են և զանազան» 5 Բ «ըս-
 տացուածոց ուղոյս» 6 Բ «քննէութեալ» 7 Բ «յոյնքն եթեր» 8 Բ «նիւթույ»
 9 Ա շատ յաճախ ունի լիւնի փոխանակ փշիկով զատ: 10 Բ «յինքենէ» 11 Բ «է
 բնութեամբ» 12 Բ «վերնայարկի ձեղուանն» 13 Բ «գգանման» 14 Բ «հողմոց»
 15 Բ «յանգութիւն» 16 Բ «նորայ», այսպիսի ուղղագրութիւն շատ յաճախ Բ օրինա-
 կում: 17 Ա «կամար», լուսանցքում աւելացրած է ենթադրաբար «պ»=կապար, նա և
 «կամար», «կաղապար», Մինք ընտրում ենք «կամար» վարկածը: Բ օրինակն արդէն
 լուսանցքագրութիւնները մտցրել է բնագրի մէջ այսպէս. «իբրև կամար կաղապար
 կապար իմն ձևանայ»: 18 Բ «և ուղոցն անատրութեամբն» 19 Բ «ի սփիւռ» 20 Բ «ջրո
 է» 21 Բ «զջերմութիւն» 22 Բ «զոյգխառնութիւնք»:

Բ. || Յաղագս Անճրեաց թէ զի՞նչ է:

Յաստուածային խորս իմաստութեան մարդկան մտածմունքը || ¹ ոչ կարացին իջանել, բայց որ զքննութիւնս երկրի վարժին ուսմամբ ըստ երիցս այս զիմաց՝ շրջելով և տեսութեամբ և լսելով՝ կամեցան ոչ յամենեկին անհասութեան թողուլ զարարածս: Եւ զծովն մեծ զայն շուրջ պատեալ զաշխարհոյս ² ասացին. և ի բազում տեղիս և կողմանս, յարեւելս և յարեւմուտս, ի հիւսիսի ³ և ի հարաւ և ի գոգս [Բ 310b] և խորշս ⁴ դիմեալ ծովացեալ և անջրպետ կղզիք մնացեալք ի չորեսին կողմանս, յոր բնակեն բազում աշխարհք: ⁵ Եւ կէսք ի նոցանէ Ատլանտինէ ⁶ կոչեն զնա և այլք Ովկիանէ: Որ ինչ փոփոխմունք յերկրիս [Ա 452b] կրին ի հողմոց և բերեն ակտս ⁷ ըստ ազգի ազգի ցաւոց և առողջութեան անտի լինին: Եւ է ինչ որ դարձեալ իւրաքանչիւր երկիրս զլորշեաց՝ յորոց գործի վնասք և աւգուտք: Եւ երկու շոգիք փղծկալիցք ⁸ յաճախ և ստէպ յերկրէ աստի յաւգս ելանեն նրբապէս անտեսանելի աչաց, որ թուի թէ յարեւելս յաճախ լինի: Եւ են դարձեալ, որ ի գետոց և յաղբերաց լինին: Երևին ինձ այսպէս նմանութեամբ՝ զի մին է ցամաք ծխալից, և է նա ի հողմոց անտի, և միւսն խոնաւ է թանձրամած՝ ի զիճականութենէն զփղծուկն տալով և աւնրով. և ի նմանէ ⁹ լինին բալք և տեսիլք սառամանեաց, ամպք ¹⁰ և անձրեք և ձիւնաբերք և կարկուտք: Բայց ի շոգւոյ ¹¹ անտի՝ հողմք ազգի ազգի, որոտմունք և փայլատակմունք, կայծակն և հուր և որ ինչ նման է սոցին:

Գ. || Յաղագս Բալոյ:

Բալ լինի ի նաւարութենէ ամպոց, || ¹ զի յորժամ թանձրանայ՝ ի բալ դառնայ և յամպս՝ ամուլ և անձնունդ յորդաբուղիս ⁵ անձրեաց, զոր սակաւութեամբ ինչ խոնաւեցուցանէ զերեսս երկրի. զոր յոյնք ընդդէմդարձ ասեն սակս արգելոյ ⁴ զարեգակնային ճառագայթս և զանձրեաց, ⁴ զոր աստուած կարգեաց ⁵ յաւգուտ մեր:

Դ. || Յաղագս Որոտման թէ ¹ զի՞նչ է կամ՝ ուստի:

Որոտումն լինի յորժամ վարին հողմք || ² ի վերին բունութենէն ⁵ և ըմբռնեալ ի միջոյ ամպոյ ⁴ ի հողմ ինչ և սաստկապէս ի բաց պատառել ամպոց՝ լինին ⁵ ճայթմունք և որոտմունք: Եւ ի ճնշել հողմոյն հուր հատանի, զոր փայլատակմունս ասեն. զի ամենայն արարածք հուր ունին յինքեանս, բայց ամպոյն խտագոյն է: Մինչ հատանէ յամպոյն՝ թէ թեթեւ ⁶ անձրեւ ելանէ և ներքին աւգն ⁷ ի վայր անցանէ, և թէ թանձր ելանէ և հանդիպի ումեք՝

Բ
 1 Բ չիք: 2 Բ «զաշխարհոյս» 3 Բ «ի հիւսիսի» և «ի հիւսուսի» 4 Բ «ի խորշս»
 5 Բ «աշխարհք» 6 ԱԲ «անտղտինէ» 7 Ա «և հողմոց և բերեն ակտս» Բ «և հողմոց և բննախոս» 8 Բ «շոգիք փղքալիցք» 9 Բ «ի նմանէն» 10 Բ «ամպ» 11 Բ «ի շոգոյ»

Գ
 1 Բ չիք 2 Բ «անձնունդս յորդաբուղիս» 3 Բ «արգել լոյս» 4 Բ «զանձրեացս» 5 Բ «պարգեւեաց»

Դ
 1 Ա շատ անգամ հնագոյն ուղղագրութեամբ «թեւ, եթե» 2. Բ չիք 3 Բ «բնութեւ»

65 ֆնասէ. Թէ անաւոր⁸ ելանէ՝ ոչ թողուն աւղբ, յերկինս անդ ժողովի անֆնաս: Բայց յաւուրս ձմերայնոյ ոչ լինի այս, զի ամպքն նաւարացեալ լինի[ն] ի հիւսիսային⁹ աւղոցն. զի հարաւային աւղն թանձրէ զամպն:

Ե. || Յաղագս Ձեան:

70 Ձիւն լինի յորժամ ի հարաւակողմ խոնարհի ||¹ արեգակն² և հիւսիսային աւղն զաւրանայ և՛ թանձրագոյն աւղքն⁵ ընդ միմեանս շփոթելով՝ թանձրանայ. և ի բաց հոսեալ կտրատին մածուցեալ, ոչ կարացեալ դառնալ⁴ [Ա 453a] ի ջուր: Ձի խստութիւն հողմոյ ոչ տայ⁵ լուծանել ի նաւարութիւն ջուրց. և յորժամ սաստկապէս թափի ի վայր՝ տաղտարափ կոչի, և մինչ⁶ սեղմապէս՝ ձիւն ասի:

Զ. || Յաղագս Կարկտի:

75 Կարկուտ լինի ի հողմոց, զոր ի թանձրացեալ ||¹ ամպոցն վերինն² բռնացեալ հանէ հողմոյ հիւսիսոյ, զոր ոլորելով բոլորէ ի խստութենէ և ի բաց հոսեալ յերկիր ընկնու. [Բ 311a] յորմէ և շաչիւն ելանէ, է՛ որ ուժգնապէս⁵ և է՛ որ նուազապէս: Բայց այլ ոչ ուստեք է՛ կամ յերկրի գոլորշեաց, կամ ի գետոց և յաղբերաց, կամ ի ծովուց, զոր կարգեաց իմաստութիւնն Աստուծոյ՝ որում ոչինչ անկարանայ, այլ ակնարկելով նորա հաստատեցաւ ամենայն ինչ, զոր ոչ ոք կարէ հասու լինել ստուգապէս:

Է. || Յաղագս Անուանց Հողմոց:

85 Որ բարեխառնապէս լինին հողմք՝ ասեմք ||¹ ցրտալից սիբ: Եւ սիբ ասել սովորութիւն է. որ ի խոնաւուտ² տեղեաց ինչ շնչէ՛ն⁵ երկրային ասեն, և որ ի հովտաց ելանէ՛ հովտային: Եւ որ ի գետոց ելանէ կամ յաղբերաց⁴ կամ ի ծովէ՛ ջրային ասեն: Արեւելեանն ի ձմերան⁵ ժամանակի յոլով լինի և արեւմտեանն՝ յամառնային, և հարաւայինն ի հասարակ աւուրսն: Բայց է, որ ի գարուն և յաշուն և ի ձմերան լինի: Եւ են ի սոցանէ որ ուղորդ շնչեն և են՝ որ զտեղեաւքն⁹ պատին: Եւ որ սաստիկքն են՝ մրրիկ ասեմք, որ յանկարծակի վերուստ ի վայր հոսին, և մառախուղ զլերամբն⁷ պատեալ լինի: ⁸

Ը. || Յաղագս Փոթորիկ Հողմոյ, զոր ի քաջաղանս եւ յառասպելս վիշապ հանել ասեն:

95 Փոթորիկն հողմ է, որ յերկրէ ի վեր ելանէ, ուր վիհք ||¹ ինչ հատեալ լինին, ի քակ և ի խռուչացեալ տեղեաց ինչ, որ ի փող անկեալ ընդ երակս երկրի և ել ինչ գտեալ՝ միաժողով ի վեր դիմեալ թանձրացեալ ամ-

նէն» 4 Բ «ամբոյ, սոյն ուղղ. և յետոյ, 5 Բ «լինի» 6 Բ «թէ թւթէ» 7 Բ «և ներքի աւթն» 8 Բ «նաւոր» 9 Բ «զի հիւսւսային»



1 Բ «չիք» 2 Բ «գաղափարագիր ԱԲ գրեթէ միշտհին ուղղագրութեամբ «հիւսւս» հիւսւսային» 3 Բ «աւղքն» 4 Բ «դառնա» 5 Բ «տայ» 6 Բ «լինչ» Ա «ինչ» լուսանցք. նոյն գրչով «մ»:



1 Բ «չիք» 2 Բ «վերին» 3 Բ «ուշգնապէս»

պով ահագին դղորդիւնս հանէ, մինչև զմայրիս յարմատոց ի բաց հանել և վէմն² խել: Եւ զինչ գտանէ՝ ահագին ձայնիւ վերացուցանէ և ընկենու յերկիր: և այս է, զոր վիշապ հանել ասեն:

400

Թ. || Յաղագս որ յառդ Ծշան լինի պէսպէս:

Բազում և զանազան տեսիլք որ յաւդդ լինին, ||¹ է որ շանթ ասեն և է որ կայծ, և է որ հուր, և է որ փայլակն, և է որ սիւն հրոյ: Ե՛ որ յարեմտից կողմանէ ելանէ և է որ յարեւելից, է որ ի հարաւոյ և է որ ի հիւսիսոյ: Եւ որ յարդազողն կոչեն [այսպէս]² լինի. գայ յաւդոց [Ա 453b] 405 թանձրացեալ, գուզնաքեայ³ զինուորապէս ունելով կերպարանս: Եւ է որ երբեմն անհաստատ լինել և երբեմն ոչ լինել:

Բայց ասող որ ձգի յաւդդ ի շփելոյ հողմոց լինի. է որ յերկար լինի չթափեալ⁴ ի բաց հրոյն և է որ առ ժամայն թափեալ լուծանի. և է որ խստութեամբ ի բաց թաւթափեալ՝ երկայն ճանապարհաւ երթեալ⁵ կորնչի: 410 Եւ բակդ⁶ լուսնի որ լինի՝ այդ թանձրացեալ աւդ է, որ ունի զճառագայթըս նորա, ելեալ ի գուրս նշոյլք՝ սակաւ բոլորակ լինի. գուշակէ ամպոց:

Ժ. || Յաղագս Աղբերաց բնութեան:

Աղբերացն բնութիւնք են այսպէս. ||¹ յաւուրս ամարայնոյ բարձրանայ արեգակն² և հալածի հիւսիսական աւդն ի ներքոյ երկնից, ազդեցուցանել 415 զիւր ցրտութիւնն ի ներքոյ երկնից, որով հովացեալ լինի աղբերաց բնութիւն, որ ի վեր բղխէ: Եւ ի հարաւ իջեալ արեգական՝³ յամեալ ընդ երկրաւ՝ ջեռնուն ներքին շտեմարանք ջուրց. զի հարաւայինն ազդէ ի ներքինս [քան] զի հիւսիսայինն բռնացեալ տիրանայ: Ծաւ⁴ մարդկան բնութիւնք ըստ երկրի [Բ 311b] գոյանան. զի ի ձմերանի⁵ ջերմ լինի ներքին որովայն, զիւրահալ լինի կերակուրն և ի վերոյ մարմինն հով, և յամարանի՝⁷ 420 ի վերոյ ջերմ ի ներքոյ հով: Զոր և իմաստունքն ի բժշկաց պատմեն զայս՝ Ասկլիպիդեայ և Հիպոկրատեայ ուսմանն⁷ ճարտարապետքն ասացին:

ԺԱ. || Յաղագս Շարժման թէ՛ ուստի լինի:

Շարժումն լինի ի հողմոց բռնութենէ, ||² զի են որ ընդ խորագոյնս

1 Բ չիք 2 Բ «ի խոնաւուտէ» 3 Բ «չնչէն» և «չնչեն» 4 և «յաղբիւրաց» 5 Բ «ի ձմերեան» 6 և «զտեղաւքն» 7 Բ «զլերամպն» 8 և «լինին»:

1 Բ չիք 2 և. հին ուղղ. «վեմս»:

1 Բ չիք 2 և ունի մակակէտ՝ ցոյց տուող որ բառ է պակասում: 3 Բ «գուզնաքեա» 4 Բ «չթափել» 5 Բ «երթալ» 6 Բ «բակտ»:

1 Բ չիք 2 Բ «բարձրանալոյ արեգական» և «արեգակն» բառը գաղափարագիր: 3 Բ «արեգակն» և գաղափարագիր 4 Բ «նայև» 5 Բ «ի ձմերայնի» 6 Բ «յամարայնի» 7 Բ «ասկլիպիդեա և հիպոկրատէս ուսմանն» և «յուսմանն»:

125 գնան հողմք և ոչ կարեն շարժել զերկիր, այլ լով ձայն ածեալ գոչեն⁵ զերկրաւս: Եւ են դարձեալ որ ոչ կարի ընդ թանձրագոյնն⁴ շարժեալ նմանապէս ձեռով: Եւ եթէ բռնացեալ ելս ի վեր գտանէ՝ յոլով քաղաքաց սպանումն գործէ և աւերումն շինուածոց:

Եւ է որ չգտեալ հողմոյն ելս՝ անցանէ անդրէն ահագին ձայն ածելով և
150 դղրդիւնս երկրի և ոչ ընդհանուր⁵ շարժել, այլ ի տեղիս տեղիս, ընդ ժամանակս ժամանակս, այլ և այլ կողմանց, իբրև եղանակաւ իմն խաղացեալ գործոյն, է որ զաւրագոյն և է որ մեղմագոյն:

ԺԲ. || Արիստոտելէս ընդդէմ՝ որոց ասեն աստուած զտարերսդ այսպէս առադրէ:

155 Թէ գոլով սոցա շարժութիւն՝ յայլմէ զաւրու || ¹ Թենէ ունին սոքա զշարժիլն, և եթէ է զաւրութիւն որ շարժէ զսոսա խնդ[Ա 454a]րելի է թէ ինքն անշարժ է թէ շարժուն: Զի եթէ զհինգերորդ² էութիւնն որ ասիցէ պատճառ շարժութեան սոցա՝ ահա և նա յաւետախաղաց և անդադար ունի զհիւ գայն զյաւեժաւն, որով և նա շարժուն⁵ է յաւէտ և որպէս յայլմէ հարկիչ զաւրութենէ ունի զմշտաշարժութիւնն: Եւ եթէ գուցէ⁴ այնպիսի, որ զմեծն զայն շարժէ գոյակ՝⁵ հարկ է անշարժ գոլ այնմիկ որ շարժէ՛ն զնա.⁶ անյեղյեղուկ և անփոփոխ և անշարժ զաւրութիւն է նորա: Եւ եթէ անյեղյեղ և առանց փնասու և կիրս ինչ կրելոյ⁷ է զաւրութիւնն այն՝ նա է աստուած արարիչ և շարժաւղ զամենայն:




ԺԱ

1 Ա շատ անգամ հին ուղղագր. «թե, եթե», Բ «թէ» նաև յաճախ «էթէ»,
2 Բ չիք 3 Բ «գոչեն» 4 Բ «թանձրագոյն» 5 ԱԲ «ընթանուր»

ԺԲ

1 Բ չիք 2 Բ «գե.երորդ» 3 Բ «շարժումն» 4 Բ «գուցցէ» 5 Բ «գոյական»
6 Բ «շարժեն զնայ» 7 Բ «կրելոյ»:



Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN. Dottendorferstr. 144